ՆԻՆՈ ԲԵՍԵԼԻԱ
ՆԻՆՈ ԲՈԿԵՐԻԱ
ՄԱԿԱ ԿՈՐՉԱՁԵ

ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱՍ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

Քաղաքացիական կրթության օժանդակ
ձեռնարկ IX դասարանի համար

USAID FROM THE AMERICAN PEOPLE
PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱՄ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

Աշակերտի գիրք

Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռարկ IX դասարանի համար, երկրորդ հրատարակություն:

Ձեռնարկի երկրորդ հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ «Սեզանում»: Երկրորդ հրատարակությունը ներկայացնում է ձեռնարկի առաջին հրատարակության փոքր-ինչ փոփոխված տարբերակը:

Հեղինակներ՝

Նինո Բեսելիա

Նինո Բոկերիա

Մակա Կորձաձե

Աշխատանքային խմբի առաջնորդ՝

Նինո Բեսելիա

Առաջին հրատարակության վրա աշխատել են՝

Խորհրդատուներ ՝

Նաթիա Նացվլիշվիլի

Քեթևան Ջանուաշվիլի

Թարգմանիչ՝ **Զոյա Մխիթարյան**

Խմբագիր՝ **Գիսանե Հովսեփյան**

Ձևավորող՝ **Մարթա Թաբուկաշվիլի**

Էջադրող՝ **Յանա Դանիելյան**

©Project Harmony, Inc., 2015

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ձեռնարկի առաջին հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ **«Գազեթի Սաքարթվելոս մացնեում»**:

ISBN 978-9941-0-7500-1

Ձեռնարկը ստեղծվել է ամերիկացի ժողովրդի աջակցության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Ձեռնարկում տրված տեղեկությունների և նրանում արտահայտված կարծիքների համար պատասխանատու են հեղինակները, և այն չի ներկայացնում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

2010-2014 թթ. PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Վրաստանում իրականացավ քաղաքացիական կրթության և մանկավարժների վերապատրաստման ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր քաղաքացիական կրթության դպրոցական ծրագրի որակի բարելավումը և ժողովրդավարական հասարակության կառուցման գործընթացում երիտասարդների մասնակցության աջակցումը:

Այս նպատակի իրականացման համար ծրագրի շրջանակներում ստեղծվել է քաղաքացիական կրթության ուսուցման չորս օժանդակ ձեռնարկ, անցկացվել են մանկավարժների վարժանքներ, ստեղծվել են դպրոցական քաղաքացիական կրթության ակումբներ, աշակերտների, մանկավարժների և ծնողների քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման համար հատկացվել են փոքր դրամաշնորհներ, հիմնադրվել է քաղաքացիական կրթության մանկավարժների համաժողով, կազմակերպվել են քաղաքացիական կրթության ամառային ճամբարներ, ստեղծվել է քաղաքացիական կրթության և քաղաքացիական նախաձեռնությունների երկու վեբ-պորտալ՝ www.civics.ge և www.initiatives.ge, աշակերտների համար անցկացվել են սոցիալական մեդիայի վարժանքներ և հիմնադրվել են քաղաքացիական կրթության գրադարաններ:

Սույն ձեռնարկը մեկն է այն օժանդակ ձեռնարկների մատենաշարից, որոնք ստեղծվել են ծրագրի շրջանակներում: Ձեռնարկը շատ քիչ փոփոխություններով երկրորդ անգամ տպագրվել է 2015թ. քաղաքացիական կրթության «Ապագայի սերունդ» նոր ծրագրի շրջանակներում, որը կրկին իրականացվում է PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ:

Դասագիրքը ձեզ կհաղորդի շատ հետաքրքիր և օգտակար տեղեկություններ: Ձեզ հնարավորություն կտա առօրյա կյանքում և գործունեության մեջ կիրառել ստացած գիտելիքները, փնտրել համախոհներ և գործընկերներ, նրանց հետ ծրագրել և իրագործել հասարակության համար օգտակար նախագծեր: Լավ քաղաքացիության սկզբունքների գործնական կիրառությամբ դուք կմասնակցեք Վրաստանի՝ որպես հզոր ժողովրդավարական պետության կառուցմանը և զարգացմանը:

Ապագա հաջողությունների ցանկությամբ՝
PH International, Վրաստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Ինչպես օգտվենք դասագրքից 7

Թեմա 1

Ինչ է ժողովրդավարությունը, և ինչ է նշանակում ժողովրդավարական հասարակությունը 10

Թեմա 2

Ակտիվ քաղաքացիություն և քաղաքացիական հասարակություն (ժողովրդավարական հասարակության բնութագրիչները) 24

Թեմա 3

Խտրականություն և հավասարություն - բոլորը տարբեր են, բոլորը՝ հավասար 36

Թեմա 4

Ինչ է քաղաքացուն անհրաժեշտ հասարակությունից, և հասարակությանը՝ քաղաքացուց 60

Թեմա 5

Ժողովրդավարական հասարակության առավելությունները ակտիվ քաղաքացիության համար 76

Հավելված 83

Դասագրքի այբբենական բառարան 87

Օգտագործված գրականություն 91

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդնե՛ր, ձեզ ներկայացված է դասագիրք, որը ձեզ կօգնի սահմանել ձեր դերը և լման ժողովրդավարական հասարակության կառուցման մեջ, իմաստավորել ակտիվ քաղաքացու հատկանիշները, գիտակցել, թե ինչ են նշանակում քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարական արժեքները:

Ուսումնական գործընթացի ընթացքում կստեղծեք նախագիծ. կընտրեք ձեր շուրջն առկա հիմնախնդիրներից մեկը, կնախանշեք նրա վճռման ուղիները և սեփական ջանքերով, պետական ինստիտուցիաների և քաղաքացիական հասարակության օգնությամբ կվճռեք այն: Այսպիսի գործողությունը ձեզ հնարավորություն կտա ընդգրկվել հասարակական կյանքի մեջ և իրացնել սեփական գիտելիքը, ընդունակությունը, կարողությունը, կստանաք կենսական փորձ և կկարողանաք գործել ի բարօրություն ձեզ, ձեր ընտանիքի, դասարանի, դպրոցի, համայնքի, գյուղի, քաղաքի և երկրի:

Պետք է հիշեք, որ ժողովրդավարության հաստատումը պարզ գործընթաց չէ: Ժողովրդավարության գոյության, նրա գլխավոր սկզբունքների ներդրման և իրականացման համար անհրաժեշտ են ողջ հասարակության միասնական ջանքերը: Ժողովրդավարությունը նշանակալիորեն սահմանվում է նրանով, թե որքանով է զարգացած ժողովրդավարական համակարգում քաղաքացիական հասարակությունը: Այն ժամանակ, երբ տոտալիտար քաղաքական համակարգերը հասարակությունում պասսիվության և **անտարբերության** տրամադրվածություն են ձևավորում, իսկական ժողովրդավարությունը նպաստում է մարդկանց և մարդկանց խմբերի՝ որպես ակտիվ քաղաքացիների ձևավորմանը: Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիները զարգանում են ըստ սեփական հետաքրքրությունների, օգտվում են իրենց իրավունքներից, պատասխանատվություն են ստանձնում իրենց և շրջապատի մարդկանց բարեկեցության համար: Նրանք կողմնորոշված են գիտելիքի, և չնայած որ կրթությունն անհրաժեշտ է բոլոր տիպի հասարակություններին, սակայն այն առանձնապես նշանակալի է ժողովրդավարական հասարակության համար:

Թոմաս Ջեֆերսոնը գրել է. «Եթե ազգն ակնկալում է, որ կարելի է լինել տգետ և միևնույն ժամանակ ներկայացնել ազատ քաղաքացիական հասարակություն, ապա այս ակնկալիքն իրականանալու բախտ չունի: Ավտորիտար հասարակությունը նպաստում է առկա իրականության պասսիվ ընդունմանը և հարմարվողականությանը, ինչը նշանակում է գոյություն ունեցածին հարմարվել, հիմնախնդիրը չնկատել: Հակառակ դրան, ժողովրդավարական հասարակության նպատակն է քաղաքացիական կրթության միջոցով նպաստել այնպիսի քաղաքացիների ձևավորմանը, որոնց մոտ զարգացած են միջավայրի քննադատաբար գնահատման և համամասնակցության կարողությունները, որոնք լավ ծանոթ են ժողովրդավարության հիմնական հասկացություններին և կարող են դրանք գործնականում իրականացնել»:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵՆՔ ԳՐՔԻՑ

Տվյալ դասագրքում քննարկված է քաղաքացիական կրթության հետ կապված հինգ կարևոր թեմա: Սրանք են.

Թեմա 1 - Ինչ է ժողովրդավարությունը, և ինչ է նշանակում ժողովրդավարական հասարակությունը

Այս գլխում կծանոթանաք ժողովրդավարության սահմանմանը, կտեսնեք տարբերությունը պետության կառավարման ավտորիտար և ժողովրդավարական ձևերի միջև: Կիմաստավորեք ժողովրդավարական հասարակության բնութագրիչները, նախագծի ստեղծման աստիճանները:

Թեմա 2 - Ակտիվ քաղաքացիություն և քաղաքացիական հասարակություն (ժողովրդավարական հասարակության բնութագրիչները)

Այս գլխում կծանոթանաք, թե ինչ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ պետք է ունենա քաղաքացիական հասարակության անդամը:

Թեմա 3 - Խտրականություն և հավասարություն – բոլորը տարբեր են, բոլորը՝ հավասար

Կպարզեք, թե ինչ են տոտալիտար և ոչ տոտալիտար գործողությունները, կսովորեք ինչպես հաղթահարել խտրականությունը:

Թեմա 4 - Ի՞նչ է քաղաքացուն անհրաժեշտ հասարակությունից, և հասարակությանը՝ քաղաքացուց

Խոսքն այն մասին է, թե ինչ է անհրաժեշտ հասարակությանը քաղաքացուց, և ինչ է անհրաժեշտ քաղաքացուն հասարակությունից:

Թեմա 5 - Ժողովրդավարական հասարակության առավելությունները ակտիվ քաղաքացիության համար

Նկարագրված է, թե որքան հարմար միջավայր է ստեղծում ժողովրդավարությունը ակտիվ քաղաքացու ձևավորման համար:

Յուրաքանչյուր թեմա բաղկացած է տեսական մասից և գործնական առաջադրանքներից: Այս առաջադրանքների նպատակն է դասի ժամանակ յուրացված տեսական նյութի խորացումը:

Յուրաքանչյուր թեմայի վերջում նկարագրված է նախագծի ստեղծման յուրաքանչյուր աստիճանը:

Առաջադրանքներում մանրամասնորեն բացատրված է, թե ինչպես պետք է բաժանվեք խմբերի և որ փուլում ինչ գործունեություն պետք է ծավալեք՝ վերջնական նպատակի հասնելու համար:

Գրքին կցված է բառարան՝ դասագրքում տրված տերմինների բացատրությամբ:

Այս դասագրքից կարող եք օգտվել բազային աստիճանի IX դասարանում, որպեսզի ավելի խորացնեք ձեր գիտելիքը քաղաքացիական կրթության կարևոր հարցերի մասին:

ԹԵՄԱ 1

ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 1

ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 1

Այս գլխում կքննարկենք, թե ինչ է ժողովրդավարությունը, կտեսնեք, թե ինչու են աշխարհի տարբեր ժողովուրդներ ընտրում հասարակության ժողովրդավարական կազմակերպումը: Ինչ առավելություն ունի այն կառավարման ոչ ժողովրդավարական ձևերի համեմատ: Տվյալ հարցերին ծանոթանալը կօգնի ձեզ լավ գիտակցել ժողովրդավարական կառավարման ձևի առավելությունը տոտալիտարիզմի համեմատ: Դուք կիմաստավորեք, թե որքան հեշտ է ժողովրդավարական կառավարման ժամանակ պաշտպանել ձեր և ուրիշների իրավունքները: Կուսումնասիրեք նաև նախագծի ստեղծման հիմունքները, կընտրեք ձեր շուրջն առկա որևէ հիմախնդիր և կսկսեք աշխատել նախագծի վրա:

Այսօրվա դասը սկսենք ժողովրդավարության հասկացության բացատրությամբ: Ժողովրդավարություն՝ դեմոկրատիա տերմինը հունարենից թարգմանաբար նշանակում է ժողովրդի կառավարում: Ժողովրդավարական կառավարման ձևը քաղաքացիներին հնարավորություն է տալիս լինել հավասար, ակտիվ մասնակցել երկրի քաղաքական և հասարակական կյանքին, ունենալ սպառիչ տեղեկատվություն պետության ներսում ընթացող գործընթացների մասին:

Արդի աշխարհում առկա ժողովրդավարական երկրների համար ժողովրդավարությունը լոկ պետական կառավարման միջոց չէ, այն նաև կենսակերպ է: Ժողովրդավարական երկրի քաղաքացին ազատ է իր ընտրության մեջ, ազատ արտահայտում է սեփական կարծիքը, ունի ինքնարտահայտման իրավունք (խոսքի, հավաքների և այլն), ընկերակցությունների ստեղծման ազատություն, օրենքի առաջ բոլորը հավասար են: Ժողովրդավարական երկրի քաղաքացին գիտի իր իրավունքները և կարող է պաշտպանել դրանք: Նա գիտակցում է նաև իր պարտականությունները երկրի և հասարակության նկատմամբ:

Ժողովրդավարությունը, հիմականում, սահմանվում է՝ որպես գործընթաց և ոչ թե՝ ֆիքսված համակարգ: Ժողովրդավարական պետությունները զարգանում են սահմանված նպատակների և իդեալների նախատեսմամբ: Ուշագրավ է, որ ժողովրդավարության զարգացումը պետք է տեղի ունենա հետևյալ արժեքների նախատեսմամբ. ազատություն, հավասարություն, քաղաքացիների մասնակցություն որոշումների կայացմանը, արդարացիություն,

ԲԱՌԱՐԱՆ

ԱՊԱԹԻԱ - հետաքրքրություն չունենալը, բացարձակ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ:

ԹՈՄԱՍ ՋԵՖԵՐՍՈՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգների 3-րդ նախագահ: Նա է գրել «Ամերիկայի Միացյալ Նահանգների հռչակագիրը»: Այս նշանակալի փաստաթղթի ստեղծման պատճառով նրան դասել են Ամերիկայի հերոսների շարքը: Նա գրագետ մարդ էր: Նրա կյանքի «հավատամքն» էր. «Ես չեմ կարող առանց գրքերի»:

ԱՐԺԵՔՆԵՐ - արժեքները մարդու համար այն են, ինչը, նրա կարծիքով, նշանակալի է: Արժեքները սոցիալապես ճանաչված գաղափարներ են այն մասին, թե ինչն է լավ, ճիշտ և ցանկալի:

բազմերանգություն, ժողովրդական ինքնավարություն, հայրենասիրություն, օրինապահություն, ուժերի բաշխում, ներկայացուցչական կառավարություն, վերահսկում և հաշվեկշիռ, անհատական իրավունքներ (թվարկված արժեքների բացատրությունները տե՛ս էջ 79-80):

Այսպիսով, ժողովրդավարության հիմնական սկզբունքն այն է, որ ողջ իշխանությունը պատկանում է անմիջապես ժողովրդին կամ նրա ներկայացուցիչներին: Կառավարման բոլոր մնացած ձևերը խախտում են այս սկզբունքը: Օրինակ՝ ինքնակալական պետական կառավարման ժամանակ իշխանությունը կոնկրետ մարդու կամ որոշակի սոցիալական խավի ձեռքում է, նրանք մնացած բնակչության անունից որոշումներ են կայացնում և ոտնահարում մարդկանց իրավունքներն ու ազատությունները, անհատական արժանապատվությունը և երջանկության ձգտումը: Հաճախ ինքնակալ կառավարողները ոտնձգություն են անում նաև անմեղ մարդու կյանքի նկատմամբ: Սրա օրինակ էր Խորհրդային Միությունը, որի տոտալիտար ռեժիմին բազմաթիվ անմեղ մարդկանց կյանք է զոհ գնացել: Պետք է հիշենք, որ տոտալիտարիզմը ժողովրդավարության հակառակ հասկացությունն է: Այն հակաժողովրդավարական քաղաքական կարգ է, ռեժիմ, որի ժամանակ պետությունն իշխում է հասարակության և անհատի վրա: Նա փորձում է վերահսկողություն սահմանել հասարակության բոլոր բնագավառներում:

Ցավոք, այսօր էլ գոյություն ունեն տոտալիտար պետություններ, օրինակ՝ Կուբան, որտեղ սահմանափակվում են մարդու իրավունքները և ազատությունները:

2009 թվականի հետազոտման արդյունքում, «Ազատ տուն» միջազգային կազմակերպության (Freedom House-ի) տվյալներով, ըստ ժողովրդավարության որակի, աշխարհում երկրները միավորվում են երեք հիմնական կարգերում՝ ժողովրդավարական երկրներ, մասամբ ժողովրդավարական երկրներ և ոչ ժողովրդավարական երկրներ:



Կանաչ գույնով նշված են ժողովրդավարական երկրները:

Դեղին գույնով նշված են մասամբ ժողովրդավարական երկրները:

Մանուշակագույնով՝ ոչ ժողովրդավարական երկրները:

ԲԱՌԱՐԱՆ

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ - պետության կառավարման ձև, որի ժամանակ ամբողջ իշխանությունը մեկ մարդու ձեռքում է:

ԲԱՌԱՐԱՆ

ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - տիրող դասակարգի կամ իշխանություն ունեցող անձի անսահմանափակ պետական իշխանություն:

Ինչպես տեսնում եք, 21-րդ դարի սկզբին աշխարհի երկրների մեծ մասը ժողովրդավարական և մասամբ ժողովրդավարական են: Համարյա ամբողջ եվրոպական հասարակությունը համարվում է ժողովրդավարական, քանի որ տվյալ երկրներում պահպանված են բոլոր վերոթվարկյալ արժեքները, մասամբ ժողովրդավարական երկրների տակ ենթադրվում են այն երկրները, որտեղ սահմանափակված են հիմնական ժողովրդավարական արժեքները:

Դուք արդեն ծանոթացաք ժողովրդավարության հասկացության էությանը, տոտալիար երկրի բնութագրիչներին: Ստացած գիտելիքի ամրապնդման համար կատարեք հետևյալ առաջադրանքները.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Քարտեզի վրա (էջ 11) գտե՛ք աղյուսակում թվարկված երկրները և դատե՛ք այս երկրներում ժողովրդավարության զարգացման որակի մասին: Վերոթվարկյալ ժողովրդավարական արժեքներից ո՞ր արժեքներն են հաստատված այս երկրներում, և որո՞նց հաստատումն է անհրաժեշտ:

Բեռլինի պատը

ԵՐԿԻՐ	ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՍՏԱՆ		
ՆՈՐՎԵԳԻԱ		
ՇՎԵԴԻԱ		
ԼԻԲԻԱ		
ԿՈՒԲԱ		
ԱՄՆ		
ՉԻՆԱՍՏԱՆ		

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

Ծանոթացե՛ք տարբեր լրատվական միջոցների և դո՛ւրս գրեք տեղեկատվություններ այն մասին, թե միջազգային մասշտաբով որտեղ են ընթանում ժողովրդավարական գործընթացներ: Բաժանվե՛ք խմբերի, ընտրե՛ք որևէ երկիր, օրինակ՝ Եգիպտոսը, Սուդանը, Լիբիան, որտեղ 2011 թվականին ընթանում էին ժողովրդավարական գործընթացներ, և գտե՛ք տեղեկատվություն՝ կապված ընտրված երկրում ժողովրդավարության զարգացման հետ:

Ռնազ Ինանիշվիլին 20-րդ դարի վրաց գրող է: Կինոռեժիսոր և գրողի մերձավոր բարեկամ Ռեզո Էսաձեն իր հուշերում նրան անվանում է «հասարակ» մարդ: Իսկապես, Ռեզո Ինանիշվիլին անձնական կյանքով աչքի չընկնող մեծ նովելիստ էր: Նրա «հեշտ» խոսքը կենսական պատմվածքներում իրականությունը պատկերում է իրեն բնորոշ ճշգրտությամբ, ջերմությամբ և սիրով: Նրա «Փոքրիկ տղան Գողգոթայում» պատմվածքը ինքնակենսագրական երկ է: Նրանում պատկերված է, թե ինչպես է սահմանափակվում անհատի ազատությունը տոտալիտար պետությունում:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Կարդացե՛ք Ռնազ Ինանիշվիլիի **«Փոքրիկ տղան Գողգոթայում»** պատմվածքը և պատասխանե՛ք հարցերին.

Մինչև պատմվածքի ընթերցումը.

- Հիշե՛ք, թե ինչ է նշանակում «Գողգոթա բարձրանալ» արտահայտությունը: Կռահե՛ք, թե ինչի մասին կարող է լինել պատմվածքը:
- Մի քանի նախադասությամբ գրե՛ք ձեր ենթադրությունը:

Սկսե՛ք կարդալ ստեղծագործությունը:

Կարդալու ընթացքում.

- Թվարկե՛ք գլխավոր հերոսի՝ տղայի հորը բնորոշ մակդիրները:
- Երրորդ պարբերությունից դո՛ւրս գրեք այն նախադասությունները, որոնք նկարագրում են տոտալիտարիզմի նենգությունը:
- Դո՛ւրս գրեք տղայի հորը բնորոշ մակդիրները ձերբակալելուց հետո:
- Տղայի հոր, տղայի, ընտանիքի անդամների ո՞ր իրավունքները խախտվեցին: Հայտնաբերված իրավունքները համապատասխանեցրե՛ք Մարդու իրավունքների համընդհանուր **հռչակագրի** համապատասխան հոդվածին:

ԲԱՌԱՐԱՆ

ԳՈՂԳՈԹԱ - արամերեն «գանգ» է նշանակում: Գողգոթան լեռ է Երուսաղեմի մոտակայքում, որտեղ հանցագործներին մահապատժի էին ենթարկում և որտեղ, ըստ Ավետարանի, խաչել են Քրիստոսին:

ՀՌՉԱԿԱԳԻՐ - հայտ, հանրային փաստաթուղթ, որն արտացոլում է տարբեր տիպի տվյալներ՝ ելնելով նրա նշանակումից: Նրանում ձևակերպված են կողմերի միջև համաձայնեցված սկզբունքները և ռազմավարությունները:

ՓՈՔՐԻԿ ՏՂԱՆ ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

Ես այն ժամանակ կարծում էի, որ հայրս արդեն տարեց է. երեսունվեց տարեկան էր, լայն ուսերով և լայն կրծքով, միշտ գոտին կապած, թագավորական երկարաճիտ կոշիկներով: Նա տնօրինում էր գյուղը: Ձեռքին միշտ լավ վարպետի պատրաստած գալարուն մտրակ կար, թեթև թռչում էր իր երիվարի վրա: Երիվարը խելագարվում էր նրա ծանրության տակ, մերթ մի կողմ թռչում, մերթ՝ մյուս, սակայն հայրս նրան ճար չէր թողնում, կարճացնում էր երասանը: Ձիուն ճսում էր աղմուկով իր սանձը կրծել: Հայրս բոլորի մոտ կանգ էր առնում. ոմանց ժպտում, ոմանց վրա բարկանում էր: Կռանում էր, ոմանց ականջին ինչ-որ բան շշնջում, որից հետո և՛ շշնջացողը, և՛ նա, ում շշնջաց, սկսում էին հռհռալ: Հորս հետ տեղ գնալիս՝ մեռնում էինք ձանձրույթից, բոլորը դուրս էին գալիս բակերից, զրույցի բռնվում նրա հետ, պատշգամբներից լավաշ վազեցնում, իսկ տարեց կանայք հանգուցյալների հիշատակին մեկական գավաթ գինի էին հրամցնում և հետո հիանում էին նրա ասած կենացներով…

Մի անգամ երեխաներս հյուղակ էինք ուզում դնել մեր ընկուզենու տակ, ոչ մի կերպ չէինք կարող ցցերը հողի մեջ խրել: Այդտեղով անցնող հայրս հասկացավ, որ դժվարանում ենք, վերցրեց ցցերից մեկը, սեղմեց և այնպես խրեց հողի մեջ, կարծես արմատները հողի մեջ էին ձգված, երկրորդն էլ նույն ձևով խրեց, երրորդն էլ, չորրորդն էլ:

Նույնիսկ ատամները չէին մգացել: Եթե կոնֆետ էր բերում, բոլ-բոլ էր բերում, «լիքը»: Եթե մեր արած որևէ բան չէր հավանում, մի լավ ապտակ էր հասցնում: Սիրում էր հորաքույրերիս, հորեղբայրներիս կանանց, տատիկներիս: Բոլորի ողջությունը հարցնում էր բարձրաձայն, հաճոյախոսում էր: Նրանք էլ իրեն էին սիրում: «Մեր գիժ» էին անվանում, «մեր խելագար»:

Եվ հանկարծ նրան ձերբակալում են: Ե՛վ հորս ձերբակալեցին, և՛ պապիս, և՛ հորեղբորս: Երկիրն էլ ձերբակալեցին՝ ասելով, թե ինչ-որ բան սխալ եք անում: Ասում են՝ անընդհատ ծիծաղել է հայրս, թե՝ տեսնենք ով է սխալվում: Շուտով պապիս և հորեղբորս բանտից հեռացնում, կորցնում են

հեռու վայրերում: Հայրս էլ կորչում, կորչում էր, նրանից ոչ ոք լուր չուներ, և հանկարծ նորից հայտնվում էր, այսինքն՝ լուր էր գալիս, որ դեռ կենդանի է, կրկին՝ Թբիլիսիում: Մենք էլ Թբիլիսի էինք տեղափոխվել: Տառապում էր տատս, տանջում իրեն, ասելով, թե խոշտանգում են որդուն, խոշտանգում: Մեկ տարուց ավել էր անցել արդեն, կարծես անընդհատ ցուրտ էր, մութ, վատ եղանակներ… Նոյեմբերի վերջին, մթնշաղին, թաքուն մեր տուն, մեր սենյակ մտավ հորս մանկության ընկեր Վանոն՝ մեծ, ուժեղ մի մարդ, մի կերպ իրար կապելով ասաց, որ վաղը առավոտյան, լուսաբացին նրան դատարան կբերեն, լավ կլինի, որ բոլորս գնանք, գոնե համոզված կլինի, որ բոլորս կենդանի ենք: Տատս լացեց, լացեց նաև ավագ քույրս, մայրս՝ չէ, ձեռքը սեղմել էր քունքին, հետ ու առաջ էր քայլում, սեղանին ինչ-որ բաներ դնում, Վանո քեռին անհարմար վիճակում էր, նույնիսկ մեկ բաժակ օղի չխմեց, ոտքի ելավ և ասաց. - Գնում եմ, ժամը հինգին կսպասեմ մութ կամրջի մոտ: - Ժամը հինգի՞ն: - Այո՛, նրանց շատ շուտ են բերում:

Մենք էլ որոշեցինք շուտ պառկել: Չստացվեց: Փոքրիկ եղբայրս հազում, շնչահեղձ էր լինում: Հետո էլ չքնեցինք: Ժամը չորսին արդեն ոտքի էինք: Տատս և փոքրիկ եղբայրս չէին կարող գալ, եղբայրս դեռ հազում, շնչահեղձ էր լինում: Երեքով էինք գնում՝ մայրս, ես և քույրս: Քեռի Վանոն իսկապես մութ կամրջի մոտ դիմավորեց մեզ: Մեզ չմոտեցավ, առանց մոտենալու առաջնորդեց: Զգույշ այս ու այն կողմ էր նայում: Ոլորանների մոտ կանգ էր առնում, հետո կրկին գնում: Ոտքերս թուլացել էին այդ անվերջանալի ճանապարհի վրա, մթության մեջ: Սառել էի: Մայրս մեկ մի ձեռքս էր տաքացնում, մեկ՝ մյուս: Վերջում, դեռ լրիվ մթության մեջ ասաց՝ հասանք: Մտապահեցի այն փողոցի անունը՝ Աթարբեգովի փողոց: Կանգնած էր մեծ, ահեղ շենքը: Ասաց՝ երկար ժամանակ չկանգնեք: Գնում-գալիս էինք, պտտվում, նորից գնում: Քեռի Վանոն հեռվում, ծառերի հետևում էր թաքնվում: Գնում էինք, գալիս, սպասում, բավական ուշ մարդիկ սկսեցին շարժվել փողոցում: Մեծ, ահեղ տունն էլ սկսեց լուսավորվել: Նրա դռնից մտնում էին տղամարդիկ, կանայք: Դռան մոտ ետ ու առաջ էին անում ոստիկանները: Վերջում ձայն լսվեց՝ բերեցին, բերեցին: Մթության մեջ հայտնված սև մեքենայի մասին էին ասում: Այդ մեքենան էլ կարծես չարչարվում էր, վերջապես կանգ առավ: Մեքենայից դուրս թռավ ձեռքը «նագանի» վրա դրած զինվորական հրամանատարը, մոտեցավ մեքենայի վերջին, ձգվեց: Մեծ շինությունից եկան երկար հրացաններով, կտկտացող երկարաճիտ կոշիկներով զինվորականները: Բացվեց մեքենայի հետևի դուռը, այնտեղից էլ դուրս թռան զինվորականներ, շրջան կազմեցին: Մեքենայից մի կերպ իջան կալանավորները՝ սև, տնքտնքալով: Նստեցին ուղիղ գետնին: «Նագանով» հրամանատարը ռուսերեն ինչ-որ բան էր ասում: Անտեղի էի փնտրում հորս: Այն գետնին նստած կալանավորներն էլ անտեղի էին հայացքները այս ու այն կողմ գցում: - Առաջ գնացե՛ք, առա՛ջ, - ձայն տվեց քեռի Վանոն: Առաջ գնացինք և կանգնեցինք: Բարկացան մեզ վրա: Նահանջեցինք: Կալանավորներին ոտքի հանեցին: Կանգնեցին՝ զինվոր, կալանավոր, զինվոր, կալանավոր: Շարժվեցին, գնում էին դանդաղ:

- Առա՛ջ վազիր և նե՛րս մտիր, - հրամայեց Վանո քեռին,- եթե դռան մոտ որևէ մեկը հարցնի, թե ով ես, ասա հավաքարարի երեխան եմ՝ Թաթարաշվիլիինը: Մտի՛ր և կանգնի՛ր մեծ աստիճանների վրա: Ես վազեցի: Ոչ ոք չհարցրեց, թե ով եմ: Բարձրացա մեծ աստիճաններով, դեպի մեծ լույսը: Աստիճանները երկու մասի բաժանվեցին: Ո՞ր կողմ բարձրանայի: Տատանվում էի: Լսեցի խիստ ձայն, պատին կպա: Շուրջն ամեն ինչ ահազդու

էր: Միայն զինվորներն էին գալիս զնգոցով՝ մեկ զինվոր, մեկ կալանավոր, մեկ զինվոր, մեկ կալանավոր:

Շատ մոտեցան: Այն ողորմելի կալանավորների մեջ ոչ էլ փնտրում էի հորս: Նրանք հազիվ էին քարշ տալիս իրենց ոտքերը: Մեկը լրիվ խեղանդամ էր, երկու ոտքերով կաղ, փոքրիկ, իր դեմի կալանավորի գոտկատեղին էր հասնում …. Եվ ահա, այն փոքրիկ կալանավորը սկսեց իմ կողմ նայել, ժպտաց ինձ և ձեռքն էլ մի քիչ բարձրացրեց, թափահարեց: Նույնիսկ շրջվել և ինձ էր նայում: Ես ցնցվեցի, ճանաչեցի, հետս ինչ-որ վատ բան կատարվեց: Նա հազիվ էր աստիճանից աստիճան բարձրանում: Մի անգամ էլ նայեց ինձ՝ ժպտալով վերևից …

Ես պպզեցի, նրանք բոլորովին վերև բարձրացան և շրջվեցին զնգոցով: Գլխավերևումս մի մարդ կանգնեց, ինչ-որ բան էր հարցնում, ոտքի կանգնեցի և կիսականգնած փախա, դուրս պրծա:

Մայրս լալիս էր, քույրս էլ: Արցունքները սրբել էր մեծ ծառի մոտ կանգնած քեռի Վանոն էլ: Մայրս եկավ ինձ մոտ:

– Տեսա՞վ քեզ:

Ես ոչինչ չասացի:

– Ասա՞ց որևէ բան:

Ես կրկին ոչինչ չասացի:

– Ձա՛յն հանիր:

– Ի՞նչ:

– Ձա՛յն հանիր, բան ասա՞ց:

– Ի՞նչ:

Մայրս նորից սկսեց հեծկլտալ:

Ես անընդհատ լուռ էի: Ատամներս սեղմելով զսպում էի ինձ:

. . . . . .

Վերջ ի վերջո՞: Վերջ ի վերջո, այո՛, գոնե կարող էի ասել , որ ժպտաց ինձ: Երկու թե երեք անգամ ժպտաց ինձ, շրջված էլ ժպտաց ինձ, սակայն ես այդ ժպիտը ժպիտ չէի կարող անվանել: Նա էր, նա, կարծես ինչ-որ տարօրինակ բան էր ասում.- Ահա՛, տեսնո՞ւմ ես, թե ինչի եմ վերածվել, տեսնո՞ւմ ես: Իմ կեսն եմ դարձել, իմ երրորդ մասը … և գնաց, բարձրացավ վերև և այնտեղ անհետացավ, երկնքին խառնվեց…

Այսպիսի բաների մասին, դուք ինքներդ գիտեք, որ ոչ մի տեղ և երբեք չեն խոսում զավակները ծնողների հետ:

Ռևազ Ինանիշվիլի

Ստեղծագործությունը կարդալուց հետո պատասխանե՛ք հարցերին.

- Որտեղի՞ց է երևում, որ տոտալիտար պետությունում արգելվում է նույնիսկ բարեկամությունը, սատարումը:
- Մտածե՛ք, թե տղայի հոր, իր՝ տղայի ընտանիքի անդամների որ իրավունքներն են խախտվել:
- Ինչի՞ է հասցնում տոտալիտար պետությունը մարդուն: Բերե՛ք օրինակներ ստեղծագործությունից:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ

Ներածության մեջ դուք ծանոթացաք, թե որքանով նշանակալի է տեսական գիտելիքի ներդրումը պրակտիկայում: Իսկ նախանշված նպատակը կկարողանաք նվաճել հենց նախագծերի միջոցով: Նախագծի ստեղծումը և իրականացումը կօգնի ձեզ կարգավորել հիմնախնդիրը: Յուրաքանչյուր դասին կքննարկեք նախագծի ստեղծման յուրաքանչյուր աստիճանը և տանը կիրականացնեք յուրաքանչյուր փուլի համար անհրաժեշտ աշխատանքը: Նախագծի վրա աշխատելու ընթացքում կկարողանաք արտահայտել ձեր հայացքները, կվճռեք, թե ում, որ կառավարական և ոչ կառավարական կազմակերպությանը պետք է դիմեք ընտրված հիմնախնդրի վճռման համար, կսովորեք, թե ինչպես հասնեք հիմնախնդրի ռազմավարական վճռմանը ընտրված կառավարական մակարդակում: Պետք է հիշեք, որ դուք պետք է համագործակցեք համադասարանցիների, ուսուցիչների, կամավորական, խանդավառ ավագների, տարբեր կառավարական կառույցների և ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ.

1. Նախ՝ գտե՛ք ձեր **համայնքում** առկա նշանակալի հիմնախնդիրները, որոշե՛ք, թե որ կառավարական կառույցն է պատասխանատու այս հիմնախնդրի վճռման համար:

2. Ընտրե՛ք նախագծի համար նշանակալի հիմնախնդիրը:

3. Գտե՛ք ընտրված հիմնախնդրի հետ կապված լրացուցիչ տեղեկություններ: Անցկացրե՛ք հետազոտություն հարցի ավելի լավ ուսումնասիրման նպատակով:

4. Ստեղծե՛ք հիմնախնդրի վճռման ռազմավարական պլան:

5. Հայթայթած տեղեկությունները ձևակերպե՛ք որպես նախագիծ (օգտագործե՛ք նախագծի վրա աշխատելու ընթացքում հավաքված նյութը՝ **պորտֆոլիոն**):

6. Վերջում կանցկացնեք նախագծի շնորհանդես և կսկսեք ձեր գործը …

Հիշե՛ք նախագծի ստեղծման համար անհրաժեշտ հենակետային հարցերը.

Ի՞նչ – նպատակ

Ինչպե՞ս – խնդիրներ

Ո՞վ – մասնակիցները

Ե՞րբ – ժամկետները

Հիշե՛ք նաև.

Նախագիծը պետք է լինի յուրօրինակ, չափելի, նվաճելի (կատարելի), իրատեսական, ժամանակի մեջ սահմանված:

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔ – երկու կամ մի քանի բնակավայրերի կամ գյուղի բնակիչների միավորում:

ՊՈՐՏՖՈԼԻՈ – աշխատությունների հավաքածու, յուրօրինակ թղթապանակ: Պորտֆոլիոն կարող է ընդգրկել աշակերտի կատարած տնային և դասարանական առաջադրանքները, խմբային նախագծերի հաշվետվությունները և այլն: Պորտֆոլիոյի նշանակումն այն է, որ աշակերտը հավաքի նյութ, ինքը գնահատի իր աշխատանքը և գիտակցի, թե ինչ գիտելիք է ձեռք բերել և նրա որ հմտություններն ու կարողություններն են զարգացել՝ ընտրված թեմայի վրա աշխատելիս: Պորտֆոլիոն հնարավորություն է տալիս, որ աշակերտը հայտնաբերի, թե ինչ սխալներ է թույլ տվել և ապագայում ինչպես կարելի է նման սխալներից խուսափել:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - I ԱՍՏԻՃԱՆ. ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Այս աստիճանի նպատակն այն է, որ դուք, ձեր համադասարանցիները և համայնքի ներկայացուցիչներն ընդհանուր ջանքերով գտնեք և միմյանց հետ փոխանակեք, թե ինչ գիտեք ձեր համայնքում առկա հիմախնդիրների մասին: Դա կօգնի ձեզ ստանալ համապատասխան տեղեկություններ նրա համար, որ խելամտորեն ընտրեք նախագծային առաջարկություններին համապատասխան հիմախնդիրը: Նախագծի վրա աշխատելու այս փուլում պետք է սահմանեք նաև, թե որ կառավարական կառույցն է պատասխանատու այս հիմախնդրի համար:

1. Բաժանվե՛ք 4-5 հոգուց բաղկացած խմբերի:

2. Գտե՛ք ձեր դպրոցում, համայնքում, թաղամասում առկա **հրատապ** հիմախնդիրներ: Հիմախնդիրները կարող եք ընտրել հետևյալ կարգերից.

- համայնքում առկա հիմախնդիրներ,
- ընդհանուր, հասարակական հիմախնդիրներ,
- հիմախնդիրներ դպրոցում,
- ձեր հասակակիցների հիմախնդիրներ:

3. Խմբում ի մի բերեք տեղեկությունները, թե ինչ գիտեք կամ ինչ եք իմացել ընտրված հիմնախնդրի մասին: Անցկացրեք հարցազրույցներ ձեր ծնողների, հարևանների, ոչ կառավարական կազմակերպությունների հետ, որոնք կապ ունեն վճռվելիք հիմնախնդրի հետ: Պարզեք, թե նրանք ինչ գիտեն ընտրված հիմախնդրի մասին և ինչ վերաբերմունք ունեն՝ կապված տվյալ հարցի հետ:

4. Տեղեկության հավաքման համար օգտվեք հարցազրույցի ստորև տրված հարցարանից:

5. Ձեռք բերված նյութը հավաքեք, որ այնուհետև տեղադրեք պորտֆոլիոյի մեջ: Հենց պորտֆոլիոյում եղած նյութի վրա հիմվելով կստեղծեք նախագիծը:

Ստորև տրված են հիմախնդրի սահմանման և վերլուծության, հարցազրույցի և լրատվամիջոցների դիտարկման ձևեր: Դրանք ձեզ անհրաժեշտ կլինեն ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքի համար, ինչպես տեղեկությունների հավաքման, այնպես էլ այդ տեղեկությունների փոխադարձ փոխանակման ժամանակ:

ԲԱՌԱՐԱՆ

ՀՐԱՏԱՊ - մեծապես նշանակալի, կենսականորեն կարևոր:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Խմբի անդամների անունները ----------
Ամիս, ամսաթիվ, տարեթիվ ----------
Հիմախնդրի անվանումը ----------

1. Դուք կամ ձեր համայնքի այլ անդամներ համարո՞ւմ եք արդյոք այս հիմախնդիրը կարևոր:
Ինչո՞ւ ----------

---

2. Իշխանության ո՞ր մարմինը կամ դեմքն է պատասխանատու այս հիմախնդրի կարգավորման համար: ----------
---
---

3. Ի՞նչ է անում իշխանությունը, ինչպե՞ս է հոգ տանում այս հիմախնդրի կարգավորման մասին:

Այն դեպքում, եթե իշխանությունը հոգ է տանում այս հիմախնդրի կարգավորման մասին, պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ դրական և բացասական կողմեր ունի իշխանության կողմից անցկացված քաղաքականությունը՝ կապված այս հիմախնդրի հետ: ----------
---

- Ինչպե՞ս կարող է բարելավվել այն: ----------

- Մտածո՞ւմ եք արդյոք, որ պետք է փոխվի իշխանության վերաբերմունքը, քաղաքականությունը տվյալ հիմախնդրի նկատմամբ: Ինչո՞ւ: ----------
---

- Ի՞նչ վերաբերմունք ունի համայնքն իշխանության քաղաքականության նկատմամբ այդ հիմախնդրի մասին: ----------
---
---

4. Որտե՞ղ կարող եք ստանալ տարբեր խմբերի կամ առանձին անհատների կողմից ավել տեղեկություն այդ հիմախնդրի և դրա հետ կապված դիրքորոշումների մասին: ----------
---

---

5. Կարո՞ղ եք արդյոք անվանել համայնքում առկա այլ հիմախնդիրներ, որոնք հետաքրքիր կլինեին դասարանական քննարկման համար: Թվարկե՛ք: ----------
---

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՁԵՎ

Անունը ----------
Ամիս, ամսաթիվ, տարեթիվ ----------
Հիմախնդրի անվանումը ----------

1. Հարցվողի անունը ----------
Նրա դերը և դիրքը համայնքում ----------
(Օրինակ՝ գործարար, թոշակառու, ծնող, աշակերտ, կամավոր): Ծանոթություն. եթե այս անձը չի ցանկանում բացահայտել իր անունը, նշե՛ք միայն նրա դերը և դիրքը համայնքում:

2. Սկզբից հարցվողին ծանոթացրեք, թե ինչ հիմախնդիր եք հետազոտում: Այնուհետև հարցեր առաջադրեք և ստացած պատասխանները գրի առեք:

ա. Արդյոք կարևո՞ր է տվյալ հիմախնդիրը: Ինչո՞ւ: ----------

բ. Ըստ ձեզ, համայնքի մյուս անդամները համարո՞ւմ են արդյոք, որ այս հիմախնդիրը նշանակալի է: Ինչո՞ւ ----------
---

գ. Ի՞նչ է անում իշխանությունը, ինչպե՞ս է հոգ տանում այս հիմախնդրի կարգավորման մասին:

- Ի՞նչ դրական կողմեր ունի իշխանության կողմից անցկացված քաղաքականությունը՝ կապված այս հիմախնդրի հետ: ----------
  ---
- Ի՞նչ բացասական կողմեր ունի իշխանության կողմից անցկացված քաղաքականությունը՝ կապված այս հիմախնդրի հետ: ----------
  ---
- Ինչպե՞ս կարող է բարելավվել այն: ----------

- Մտածո՞ւմ եք արդյոք, որ պետք է փոխվի իշխանության վերաբերմունքը, քաղաքականությունը տվյալ հիմախնդրի նկատմամբ: Ինչո՞ւ: ----------
  ---

- Ի՞նչ վերաբերմունք ունի համայնքն իշխանության քաղաքականության նկատմամբ այդ հիմախնդրի մասին: ----------
  ---

դ. Որտե՞ղ կարող ենք ստանալ ավել տեղեկություն այդ հիմախնդրի և նաև դրա հետ կապված դիրքորոշումների մասին: ----------
---

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵՎ

Անունը ---------- ----------
Ամիս, ամսաթիվ, տարեթիվ ----------
Ժամանակը ----------
Հիմախնդրի անվանումը ----------

1. Լրատվամիջոց (սա կարող է լինել հեռուստատեսային կամ ռադիոհաղորդում, վավերագրական ծրագիր, հարցազրույց կամ ցանկացած այլ, ինչը վերաբերում է տվյալ հիմախնդրին) ----------
---

Հաղորդումը դիտելիս նկատի ունեցեք հետևյալ հարցերը.

2. Ցուցաբերվա՞ծ է արդյոք տվյալ հիմախնդիրը՝ որպես կարևոր: Ինչո՞ւ: - ----------
---
---

3. Ի՞նչ է անում իշխանությունը, ինչպե՞ս է հոգ տանում այս հիմախնդրի կարգավորման մասին:

- Ի՞նչ դրական կողմեր ունի իշխանության կողմից անցկացված քաղաքականությունը՝ կապված այս հիմախնդրի հետ: ----------
  ---
- Ի՞նչ բացասական կողմեր ունի իշխանության կողմից անցկացված քաղաքականությունը՝ կապված այս հիմախնդրի հետ: ----------
  ---
- Ինչպե՞ս կարող է բարելավվել այն: ----------

- Մտածո՞ւմ եք արդյոք, որ պետք է փոխվի իշխանության վերաբերմունքը, քաղաքականությունը տվյալ հիմախնդրի նկատմամբ: Ինչո՞ւ: ----------
  ---

- Ի՞նչ վերաբերմունք ունի համայնքն իշխանության քաղաքականության նկատմամբ այդ հիմախնդրի մասին: ----------
  ---

ԹԵՄԱ 2

ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ)



ԹԵՄԱ 2

ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ)

ԲԱՌԱՐԱՆ

ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ – մտքերի բազմերանգության գոյություն և դրանց ընդունում:

ՆԻՀԻԼԻԶՄ - ժխտարարություն՝ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ:

ԴԱՍ 2

Այս գլխում կծանոթանաք, թե ինչ գիտելիք և հմտություններ ու կարողություններ պետք է ունենա քաղաքացիական հասարակության ակտիվ անդամը: Կգիտակցեք քաղաքացիների խաղաղ համագոյակցության կարևոր բնութագրիչները՝ հավասարությունը և **բազմակարծությունը:**

Նախ՝ պետք է սահմանենք, թե ինչ է նշանակում լինել քաղաքացի: Քաղաքացի հասկացության բացատրությունը բազմակողմանի է: Իրավական տեսակետից քաղաքացին անհատ է, որի քաղաքացիական և քաղաքական իրավունքները պաշտպանում է այն պետությունը, որում ապրում է ինքը: Բացի այդ, քաղաքացիներն ունեն պարտականություններ պետության նկատմամբ, որոնցից հիմնականներն են երկրի օրենքների պահպանումը, պարտադիր զինվորական ծառայությունը, եկամուտներից հարկերի վճարումը և այլն:

Պատմականորեն և այսօր էլ քաղաքացի հասկացության գլխավոր սահմանողը անհատի կողմից իրավունքներից օգտվելն է և պարտականությունները կատարելը: Հիշեք, որ մարդու և քաղաքացու միջև հիմնական տարբերությունն այն է, որ մարդուն ի ծնե շնորհված են իրավունքներ, իսկ քաղաքացին, բացի իրավունքներից, ունի նաև պարտականություններ:

Ցավոք, մի շարք երկրներում ժամանակակից քաղաքացին ակտիվորեն չի մասնակցում հասարակության մեջ ընթացող գործընթացներին: Հիմնականում, նրա մասնակցությունը սահմանափակվում է ընտրությունների ժամանակ քվեարկելով: Երբեմն դա էլ չի անում: Այսպիսի **նիհիլիստական՝ ժխտարարական** վերաբերմունքը խափանում է ժողովրդավարական զարգացումը:

Հասարակականորեն ակտիվ քաղաքացին պետք է ընդգրկված լինի տարբեր հասարակական գործերի մեջ, հետաքրքրվի երկրում, քաղաքում, համայնքում ընթացող գործընթացներով, բարձրաձայն հարցեր առաջադրի հասարակական նշանակալի խնդիրների մասին:

Զարգացած ժողովրդավարական երկրներում ակտիվ քաղաքացիները մշտադիտարկում են իշխանությանը տեղական կամ կենտրոնական մակարդակներում: Քաղաքացիական հասարակության տարբեր ինստիտուտների հետ համամասնակցությամբ կենտրոնացնում են հասարակության և իշխանության ուշադրությունը՝ կապված առկա հիմնախնդիրների

հետ, ակտիվորեն կիրառում են լրատվամիջոցները, հանրային ելույթները և խաղաղ հանրահավաքները՝ մտքի արտահայտման համար:

Այս հատկություններն ունեցող քաղաքացիներից բաղկացած սոցիումը հանդիսանում է քաղաքացիական հասարակություն: Քաղաքացիական հասարակությունը անհատների կողմից նախաձեռնված, ինքնակառավարումից և քաղաքացիների կողմից կամավոր ձևավորված ընկերակցությունների միասնականություն է: Նրանց գործունեությունը օրենքով պաշտպանված է պետության կողմից անմիջական միջամտությունից: Պետությունն իրավունք չունի ինքնակամ սահմանափակել նրանց գործունեությունը:

Մտածե՛ք, թե դուք ինչ ներդրում եք ունեցել դպրոցի, ընտանիքի, հասարակության կյանքում:

Երկրում հզոր քաղաքացիական հասարակության ձևավորման համար ձեզանից յուրաքանչյուրը պետք է դառնա հասարակականորեն ակտիվ քաղաքացի: Դրանում ձեզ կօգնի ժողովրդավարական պետության բնորոշ հատկանիշների լավ իմաստավորումը:

Ժողովրդավարական պետության բնորոշ հատկանիշներն են հավասարությունը, օրենքի գերակայությունը, ինքնուրույն դատական համակարգը, ազատ, արդարացի ընտրությունները, իշխանության թափանցիկությունը, իշխանության բաժանումն ինքնուրույն ճյուղերի, անկախ լրատվամիջոցները, մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանությունը, բազմակարծությունը:

Պարզաբանենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Մտածեք և հիշեք օրինակ, երբ անհատի իրավունքները սահմանափակվել են նրա որևէ հատկանշի տարբերության պատճառով: Ինչ եք կարծում, ինչո՞ւ: Հնարավո՞ր էր արդյոք խուսափել խտրականությունից:

Հավասարությունը ենթադրում է բոլոր մարդկանց հավասարություն իրավունքների և օրենքի առջև՝ անկախ նրանց էթնիկական ծագումից, հասակից, սեռից, դավանանքից, կարողություններից և այլն: Բոլոր մարդկանց իրավունքները պետք է պաշտպանված լինեն, քանի որ բոլոր մարդիկ ի ծնե հավասար են:

Ժողովրդավարական հասարակությունում ցանկացած խումբ, ինչպիսիք են՝ երեխաները, կանայք, տարեցները, **էմիգրանտները, սահմանափակ հնարավորություններով անձինք, ազգային փոքրամասնությունները** չեն ենթարկվում խտրականության, ինչը նշանակում է, որ նրանց իրավունքները չեն խախտվում, ընդհակառակը, նրանց օգնում են դրսևորել իրենց անհատականությունը և ընդգրկվել հասարակական կյանքի մեջ: Ժողովրդավարական հասարակությունն ապահովում է քաղաքացիների առավելագույն հավասարություն:

ԲԱՌԱՐԱՆ

ԷՄԻԳՐԱՆՏ - տարագիր, վտարանդի՝ անձ, որը մշտական բնակման է ուղևորվում այլ պետություն:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՁ - սահմանափակ հնարավորություններով անձը մարդ է, որի մոտ հիվանդության, վնասվածքի, մտավոր կամ ֆիզիկական արատի հետևանքով, առողջության այս կամ այն չափով խախտման պատճառով խախտված են օրգանիզմի կենսական ֆունկցիաները, ինչը պայմանավորում է մասնագիտական աշխատանքի կարողության լրիվ կամ մասնակի կորուստ կամ կենցաղի և կյանքի էական դժվարացում, ինչը նրան տանում է գործունակության ժամանակավոր կամ մշտական սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (Վրաստանի օրենք բժշկական, սոցիալական փորձաքննության մասին, ընդհանուր դրույթ, հոդված 3):

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ - տվյալ երկրում մշտապես ապրող բնակչության ոչ դոմինանտ մաս, որը մեծամասնությունից տարբերվում է իր էթնիկական, կրոնական կամ լեզվական բնութագրիչներով և ցանկանում է պահպանել իր ինքնատիպությունը:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - առանձին անձանց կամ խմբերի իրավունքների սահմանափակում կամ նրանց նկատմամբ բացասական վերաբերմունք՝ առանց հիմավորման:

Ժողովրդավարական հասարակությունում նշանակալի է նաև օրենքի գերակայությունը:

Օրենքի առջև բոլորը պետք է հավասար լինեն: Ժողովրդավարական միջավայրում արդարացիությունը պայմանավորված է օրենքի գերակայությամբ: Օրենքը սահմանափակում է մարդուն՝ նրա վրա դնելով որոշակի պարտականություններ և պատասխանատվություններ: Միևնույն ժամանակ այն անհատին պաշտպանում է անարդարությունից:

Հատուկ պետք է նշել, որ ժողովրդավարական պետությանը բնորոշ կարևոր բնութագրիչներից մեկը անկախ դատական համակարգն է: Դատարանի միջոցով տեղի է ունենում մեսացած երկու՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների սահմանափակումը, նաև՝ քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

Պետք է հիշեք, որ ժողովրդավարության նշանակալի ձեռքբերումը ազատ ընտրություններն են: Ազատ ընտրություններն իրականացվում են այն ժամանակ, երբ նրանում մասնակցելու իրավունք ունեցող անձինք հնարավորություն ունեն առանց խոչընդոտի քվեարկել իրենց ցանկալի թեկնածուների օգտին: Ազատ ընտրությունների արդյունքները պետք է արդարացիորեն արտացոլեն **էլեկտորատի՝ ընտրողների** կամքը: Միջազգային բոլոր ընտրական սկզբունքները նախատեսում են յուրաքանչյուր մարդու սեփական պետության կառավարմանը ազատ մասնակցելու իրավունքը:

Ժողովրդավարության ևս մեկ նշանակալի բնութագրիչ է բազմակարծությունը և **բազմերանգությունը**, ինչը ենթադրում է կենսակերպի, տեսակետների և հետաքրքրությունների բազմազանություն: Բազմակարծիք հասարակության անդամներն ունեն անհատական ազատություն, սակայն, բացի այդ, նրանք ակտիվ համագործակցում են միմյանց հետ՝ փոխզիջման ճանապարհով համաձայնության և ընդհանուր նպատակների հասնելու համար: Բազմակարծության բաղադրատարրերն են՝ բազմերանգության (ավանդույթների, կրոնական հավատի, բարոյական արժեքների և այլն) հարգանք, անհատական իրավունքների պաշտպանություն, քաղաքական թափանցիկություն, քաղաքացիների մասնակցություն որոշումների կայացման գործընթացին, ընդհանուր նպատակի նվաճման համար համաձայնության ուղիների որոնում:

Մարդկանց հավասարությանը, օրենքի գերակայությանը, բազմակարծությանը, իրավունքների պաշտպանությանը նշանակալիորեն նպաստում են մասնագիտական, անկախ լրատվամիջոցները: Դրանք նպաստում են բնակչության համար հրատապ թեմաներով բանավեճերի անցկացմանը, որտեղ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հնարավորություն ունեն մասնակցել իրենց համար կարևոր հարցերի քննարկմանը: Անկախ լրատվամիջոցները պետք է ապահովեն կարծիքի արտահայտման ազատություն, ինչը ենթադրում է այն, որ քաղաքացին իրավունք ունի, ըստ իր հայեցողության, բանավոր, գրավոր կամ այլ ձևով հայթայթել, ստանալ և տարածել ցանկացած տիպի տեղեկատվություն, որը չի հակասում երկրում գործող օրենսդրությանը:

Ժողովրդավարության կարևորագույն տարրը իշխանության թափանցիկությունն է, ինչը ենթադրում է հասարակության

ԲԱՌԱՐԱՆ

ԷԼԵԿՏՈՐԱՏ - մարդիկ, որոնք կարող են մասնակցել տարբեր մակարդակի ընտրությունների և աջակցել որևէ խմբի:

ԲԱԶՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ – գոյություն ունի այն ժամանակ, երբ ամբողջ հասարակությունը և համայնքը, յուրաքանչյուր փոքրամասնական խումբ արդարացիորեն մասնակցում է բոլոր այն որոշումների կայացմանը, որ վերաբերում են այս հասարակության համար նշանակալի հարցերին:

տեղեկացվածությունը, թե ինչու և ինչպես է կառավարությունը կայացնում այս կամ այն որոշումը, ինչպես է ծախսվում պետական բյուջեն, որը բաղկացած է յուրաքանչյուր քաղաքացու կողմից վճարված հարկերից:

Որպեսզի դառնաք ակտիվ քաղաքացի, դուք պետք է կարողանաք մասնակցել հասարակական գործունեությանը, տեսնել հիմնախնդիրը և որոնել նրա վճռման ուղիները: Հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին նպաստում է պետության և հասարակական կազմակերպությունների միջև ակտիվ համագործակցությանը: Հասարակական ընդգրկվածությունն օգնում է ինստիտուտներին նախատեսել հասարակության շահերը: Քաղաքացու կամավոր մասնակցությունը երկրի և հասարակության զարգացման ակտիվություններին օգնում է անհատին գիտակցել սեփական կարիքները, հիմնախնդիրները, դերերը և պատասխանատվությունները: Սեփական դերի նշանակության գիտակցումը բարձրացնում է անհատի ինքնավստահությունը և հանդիսանում է սեփական նախաձեռնությամբ հիմնախնդիրների կարգավորման խթանիչ:

Անհատական և հասարակական մակարդակում մասնակցելու համար պետք է զարգացնեք ձեր հետևյալ հմտությունները և կարողությունները՝ համագործակցություն, հոգատարություն, հավատարմություն, լիդերություն, հաստատակամություն, հարգանք, համարձակություն, ազնվություն, պատասխանատվություն:

Մտածե՛ք և բնութագրե՛ք վերևում տրված յուրաքանչյուր հատկանիշ: Որքանո՞վ եք կրում այս հատկանիշները: Ինչպե՞ս պետք է տեղի ունենա այս հատկանիշների զարգացումը: Կարծիքներ փոխանակեք ձեր զուգընկերոջ հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Այս գլխում ստացած գիտելիքի յուրացման լավագույն միջոցը բանավեճ վարելու կարողության զարգացումն է: Այդ նպատակով ծանոթացեք բանավեճ վարելու միջոցներին և կատարեք հետևյալ առաջադրանքը.

Բաժանվեք 10-12 հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խումբ բաժանվի երկու ենթախմբի՝ տեսակետի համախոհների և ընդդիմախոսների: Ընտրեք առանձնահատուկ թեմա և փորձեք բանավեճի միջոցով որոշում կայացնել: Բանավեճի ենթադրյալ թեմաներ են.

– Արդյոք ճի՞շտ են մեզ դաստիարակում մեր ծնողները, և դուք ինչպե՞ս կդաստիարակեք ձեր երեխաներին:

– Կարո՞ղ է արդյոք քաղաքացիական հասարակությունը ազդել քաղաքականության վրա:

– Ի՞նչ ենք սովորում հեռուստատեսությունից դրական, և ի՞նչ՝ բացասական:

Նկատի ունեցեք. առաջադրանք 1-ի կատարման ժամանակ պահպանե՛ք բանավեճը վարելու եղանակները.

1. Միշտ հիշեք բանավեճի նպատակները. պետք է գտնեք ճշմարտությունը, ելքը, վճռեք հիմախնդիրը:

Պետք է քննարկեք միայն այն հարցերը, որոնք կապված են տվյալ թեմայի հետ:

Ոչինչ չտվող հիշողությունները, ափսոսանքը, ոչ ճիշտ համեմատությունները քաղաքավարի կերպով ընդհատեք:

Աշխատեք, որ քննարկումը չհեռանա թեմայից: Թույլ չտաք նաև, որ կողմերն աշխատեն ապացուցել իրենց առավելությունը: Զգտեք ոչ թե հաղթանակի, այլ ճշմարտության:

2. Հարգանքով մոտեցեք այլ մարդկանց տեսակետներին:

Ցանկացած կարծիք կոնկրետ անհատի տեսակետ է: Չնայած ձեր հայացքներից տարբեր լինելուն, այն ունի գոյություն ունենալու իրավունք: Չնեղացնեք ուրիշներին և չկոչեք նրանց հայացքները սխալ, ոչ ընդունելի, ծիծաղելի: Քանի դեռ բանավեճը չի ավարտվել, ցանկացած տեսակետ հնարավոր է ընդունելի լինի: Բանավեճի վերջում կարող է պարզվի, որ բացարձակ անընդունելի համարված տեսակետն է ճիշտը:

3. Արտահայտված ցանկացած կարծիք, հայացք պետք է ամրապնդվի փաստարկներով:

Հենց սրանով է բանավեճը տարբերվում վիճաբանությունից: Զրուցողը պետք է փաստերով ապացուցի, թե ինչու է այս կամ այն տեսակետը համարում ճիշտ: «Ես այսպես եմ կարծում, ես գտնում եմ, միշտ այսպես էր» արտահայտությունները չեն կարող համարվել փաստարկներ:

4. Հարգեք բոլոր մարդկանց կարծիքները:

Երբեմն հայտնի, հեղինակավոր մարդու կարծիքը հենց սկզբից ճիշտ է համարվում՝ ելնելով միայն այդ մարդու կարգավիճակից (պրոֆեսոր, հետազոտող): Լսեք նրանց, սակայն հիմվեք իրական փաստերի վրա: Գտե՛ք նոր մոտեցումներ՝ կապված անլուծելի հիմախնդիրների հետ:

5. Պահպանեք բարեկամական հնչերանգը:

6. Դիմեք զրուցակցին անունով կամ որևէ հարգալից ձևով (գործընկեր, **ընդդիմախոս**): Ձեր ընդդիմախոսը ձեր անձնական թշնամին չէ, նա ուրիշ հայացք ունեցող անհատ է: Թույլ չտաք զրուցակցի անհատական անարգանք:

7. Չվիճեք նրա համար, որ վիճած լինեք: Թույլ չտաք, որ բանավեճը վերածվի վեճի և հարաբերություններ պարզելու միջոցի: Հիշեք, որ վեճի նպատակն է ճշմարտության ապացուցումը, իսկ բանավեճինը՝ ճիշտ որոշում գտնելը, իրավիճակից դուրս գալը:

ԲԱՌԱՐԱՆ

ԸՆԴԴԻՄԱԽՈՍ – վեճի ժամանակ հակառակ կարծիք ունեցող մարդ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

Պատկերացրեք, որ ձեր համայնքում, քաղաքում, գյուղում, թաղամասում չկա ազատ ժամանակ անցկացնելու ոչ միջոց: Ոչ ոք հետաքրքրված չէ ազատ ժամանակի կազմակերպմամբ: Ավելին, թաղամասում միայն տոտալիզատոր կա: Այդ պատճառով երիտասարդների մեծ մասը անգործ կանգնած է փողոցում կամ «զվարճանում է»՝ տոտալիզատորում խաղալով:
Ազատ ժամանակի այսպիսի անցկացումը ստեղծում է բռնության վտանգ, ոչ առողջ կենսակերպի, թմրամոլության, ալկոհոլիզմի հաստատման վտանգ:

- Բաժանվեք խմբերի և մտածեք, թե ինչպես կարելի ձեր համայնքում կազմակերպել ազատ ժամանակը:
- Անհրաժեշտ չէ՞ արդյոք ստեղծել հասարակական կազմակերպություն, և ինչպիսի՞ն պետք է լինի նրա կառուցվածքը:
- Չե՞ն կարողանա արդյոք հիմախնդրի կարգավորման մեջ ձեզ օգնել համայնքում արդեն առկա կազմակերպությունները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Ծնողներն իրենց երեխային լողի տարան: Նրանք ոչ էլ հետաքրքրվել էին երեխայի կարծիքով: Այնինչ նրա հետաքրքրության ոլորտը ֆուտբոլն էր:

Դատեք, թե ինչու չնախատեսեցին ծնողներն իրենց զավակի հետաքրքրությունը:
Ինչո՞ւ չմասնակցեց երիտասարդը սեփական կյանքի պլանավորմանը:
Ինչո՞ւ այսպես վարվեցին ծնողները:
Ինչպե՞ս պետք է վարվեին ծնողները:
Դատողության ժամանակ նախատեսեք անձնական և հասարակական մասնակցության համար անհրաժեշտ փուլերը.
- իրավիճակի վերլուծություն,
- անհրաժեշտության գնահատում,
- նպատակների նախանշում,
- կոնկրետ ակտիվությունների սահմանում,
- ռեսուրսների մոբիլիզացում,
- իրականացում,
- գնահատում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4

Մի ընտանիքում երեք տարբեր տարիքի երեխաներ էին մեծանում: Նրանք միայն մեկ հեռուստացույց ունեին: Հաճախ նրանք անախորժություն էին ունենում, քանի որ տարբեր հաղորդումներ էին ցանկանում դիտել: Կոնֆլիկտը հաճախ ծեծկռտուքի էր վերածվում: Նրանցից մեկը ելքը գտել էր. այլևս չէր դիտում հեռուստացույց:

Բանավեճի հարցերը.
Արդյոք ճի՞շտ որոշում էր կայացրել աղջնակը: Հիմնավորե՛ք: Ինչ եք կարծում, վճռվե՞ց արդյոք հիմնախնդիրը: Ինչպե՞ս:
Ի՞նչն էր աղջկա մեկուսացման պատճառը:
Ըստ ձեզ, ինչպե՞ս պետք է վարվեր աղջիկը:
Հիշեք, թե ինչպես պետք է վճռեք հիմնախնդիրը և որոշում կայացնեք.

- Պետք է որոշեք հիմնախնդիրը:
- Պետք է նպատակ նախանշեք:
- Գտնեք հիմնախնդրի վճռման այլընտրանքային ուղիներ:
- Նախատեսեք ենթադրյալ արդյունքները:
- Ընտրեք լավագույն ելքը:

Եթե աղջիկն օգտվեր հիմնախնդրի վճռման այս ճանապարհից, ինչպե՞ս պետք է վարվեր և ի՞նչ արդյունք կստանար:

Ինչպե՞ս կվարվեր աղջիկը, եթե գիտակցած լիներ բազմակարծության հասկացությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5

Ստորև տրված աղյուսակում գրեք ձեր դպրոցի, համայնքի, հարևանության փոքրամասնության մեջ գտնվող կամ սոցիալապես անապահով խմբերը և նրանց հիմնախնդիրները:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ		
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ	ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ	ԴՊՐՈՑՈՒՄ

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ.

Ի՞նչ հիմախնդիրներ ունեն նրանք:

Ի՞նչ է անում հասարակությունը փոքրամասնությունների հիմախնդիրների վճռման համար:

Դուք ինչպե՞ս կվճռեիք նրանց հիմախնդիրները:

ԲԱՌԱՐԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ - ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին: Հռչակագիրը վերաբերում է ինչպես քաղաքացիական և քաղաքական, այնպես էլ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին: Մասնավորապես, հռչակագրով նախատեսված են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են կյանքի իրավունքը, անձնական անձեռնմխելիության իրավունքը և այլն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6

«Իրավունքներ և պարտականություններ»

- Ինչ եք կարծում, ի՞նչ տարբերություն կա կանոնների և պարտականությունների միջև:
- Ի՞նչ կապ կա իրավունքների և կանոնների միջև:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե որևէ մեկը խախտի որևէ իրավունք:
- Ըստ ձեզ, ի՞նչ դրական արդյունք է բերում, երբ դասարանն ունի աշակերտների կողմից կազմված կանոններ: Բերե՛ք երկու այսպիսի օրինակ:
- Պարզեք, ձեր դպրոցում կա՞ն աշակերտների հետ կապված որոշակի կանոններ, հրահանգներ կամ ընթացակարգեր, որոնց կազմելուն մասնակցել են դպրոցի աշակերտները:
- Համաձա՞յն եք դրանց հետ:
- Կարելի՞ է արդյոք փոխել դրանք: Ինչպե՞ս:
- Ի՞նչ է տեղի ունենում, երբ մարդիկ չեն պահպանում կանոնները:
- Յուրաքանչյուր իրավունքի դիմաց արձանագրեք, թե կոնկրետ ինչ պարտականություն ունի յուրաքանչյուր մարդ այն բանի ապահովման համար, որ բոլոր մարդիկ օգտվեն այդ իրավունքներից:

ՕՐԻՆԱԿ.

(Այս իրավունքները պաշտպանված են **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով**)

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՈԼՈՐՆ ՈՒՆԵՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՈՐ ԻՐԵՆՑ ՀԵՏ ԱՐԴԱՐԱՑԻ ՎԱՐՎԵՆ:	ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԲՈԼՈՐԻ ՀԵՏ ԱՐԴԱՐԱՑԻ ՎԱՐՎԵԼԸ:
ԲՈԼՈՐՆ ՈՒՆԵՆ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ...	ԲՈԼՈՐԻՆ ՊԵՏՔ Է ՏՐՎԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ...

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՇՏԱՆԳՈՒՄԻՑ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՆԱՉԱՌ ԴԱՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏ ՃԱՆԱՉՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՊԱՍՏԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ՄՏԱԾԵԼՈՒ, ԳԻՏԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ, ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՄՆՎԵԼՈՒ, ԽՄԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՄԱՆ ՏԵՂԻ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ԻՐԱՎՈՒՆՔ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ, ԱՅՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ, ՈՐՏԵՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ:	

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - II ԱՍՏԻՃԱՆ. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախագծի վրա աշխատելու երկրորդ աստիճանում յուրաքանչյուր խումբ պետք է պատկերացնի, թե ինչ տեղեկություններ է հավաքել համայնքում առկա հիմախնդիրների մասին: Ամբողջ դասարանը քննարկում է ներկայացված հիմնախնդիրները, դատում է, թե բավակա՞ն են արդյոք ստացած տեղեկություններն այն բանի համար, որ ընտրեք նախագծային առաջարկին համապատասխան հիմախնդիր:

Դասարանական բանավեճի միջոցով քննարկեք, տիրապետո՞ւմ եք արդյոք բավական տեղեկությունների նախագծային առաջարկին անհրաժեշտ հիմախնդրի ընտրության համար:

Եթե դասարանը մտածում է, որ ձեռք բերված տեղեկությունները բավական են որոշման կայացման համար, ձայների մեծամասնությամբ ընտրեք քննարկվելիք հիմնախնդիրը: Հարցեր առաջադրեք և վերստուգեք, թե իսկապե՞ս կարևոր է ընտրված հիմախնդիրն ինչպես ձեզ, այնպես էլ՝ համայնքի համար: Համոզվեք, որ հնարավոր է հետաքրքրիր նյութ հավաքել, պորտֆոլիո պատրաստել՝ կապված այս հիմախնդրի հետ:

Նրանից հետո, երբ կընտրեք նախագծային առաջարկի համար անհրաժեշտ հիմախնդիր, մտածեք, թե որտեղ կարելի է հայթայթել լրացուցիչ տեղեկություններ տվյալ հիմախնդրի մասին:

ԹԵՄԱ 3

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ - ԲՈԼՈՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ, ԲՈԼՈՐԸ՝ ՀԱՎԱՍԱՐ

ԹԵՄԱ 3

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ - ԲՈԼՈՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ, ԲՈԼՈՐԸ՝ ՀԱՎԱՍԱՐ

ԴԱՍ 3

Նախորդ դասին դուք ծանոթացաք քաղաքացիական հասարակության բնութագրիչներին, յուրացրիք ակտիվ քաղաքացիության համար անհրաժեշտ հմտությունները և կարողությունները, նախագծի համար ընտրեցիք ձեր համայնքում առկա հիմնախնդիրը:

Այս դասին կծանոթանաք խտրականություն հարուցող պատճառներին և դրանց հաղթահարման միջոցներին:

Խտրականությունը բառացիորեն տարբերություն է նշանակում, սակայն այս հասկացությունն անհամեմատ ավելի բարդ բովանդակություն ունի: Այն ենթադրում է մարդկանց տարբերության հիման վրա նրանց միջև անարդարացի վերաբերմունք, բռնություն, հետապնդում, վերաբնակեցում, արգելքներ, ճնշում:

Խտրականության հասկացության էության գիտակցման նպատակով, ձեզ կներկայացնենք ժողովրդավարական պետության քաղաքացու հիմնական արժեքը՝ հանդուրժողականությունը, այս հասկացությունը հաճախ կիրառվում է՝ որպես ժողովրդավարության հոմանիշ:

Ելնելով պատմական իրականությունից՝ հանդուրժողականության հասկացությունը տարբեր մշակույթներում տարբեր է: Վրացերենում հանդուրժողականության հոմանիշը ներողամտությունն է:

Վրաստանը հայտնի է իր հանդուրժողական տրամադրվածությամբ, այստեղ դարեր շարունակ խաղաղ համագոյակցել են տարբեր կրոնների ներկայացուցիչներ: Դրա վառ օրինակ է ուղղափառ, հայկական, կաթոլիկ տաճարների, հրեական սինագոգի, մահմեդական մզկիթի միմյանց կողք-կողքի գոյությունը:

Ժամանակի ընթացքում աշխարհի մշակույթներում առկա հանդուրժողականության բարոյական արժեքներին ավելացան քաղաքական և իրավական պահանջներ և ստեղծվեց «Հանդուրժողականության սկզբունքների հռչակագիր», որի համաձայն հանդուրժողականությունը աշխարհի բազմատեսակ մշակույթների, այս մշակույթներում առկա տարբեր արժեքների դրսևորման ձևերի, տարբեր մարդկանց հարգելու և ճանաչելու խոստովանումն է: Հանդուրժող մարդու դաստիարակմանը նպաստում է կրթությունը, հաղորդակցությունը, մտքի ազատ արտահայտման կարողությունը, գիտակցումը և հավատը:

Հանդուրժողականությունը տարբերությունների ներդաշնակություն է: Այն լոկ բարոյական պարտականություն չէ, այն նաև քաղաքական և

իրավական պահանջ է: Հանդուրժողականությունը բարձր բարոյական պարտականություն է, որը հավասարվում է արժանապատվության հետ: Այն նպաստում է խաղաղությանը և հնարավոր դարձնում պատերազմի մշակույթը փոխարինել խաղաղության մշակույթով: Հիշատակված հռչակագիրը 1995 թվականի նոյեմբերի 16-ին ընդունել է աշխարհի 185 պետություն:

Չպետք է մոռանաք, որ հանդուրժողականության հասկացության «ողնաշարը» մարդու իրավունքների հարգանքն է: Հանդուրժողականությունը նպաստում է բազմակարծությանը և օրինականության հաստատմանը, ինչը, ինչպես նշեցինք նախորդ գլուխներում, ժողովրդավարության հիմքն է:

Հանդուրժողականությունը չի նշանակում ներողամտություն սոցիալական անարդարության և օրինախախտման նկատմամբ: Այն ոչ էլ անտարբերություն և սեփական շահերի զիջում է ենթադրում:

Անհնար է, որ բոլոր տեսակի վարքերը մեզ համար ընդունելի լինեն: Մարդկանց այնպիսի վարքը, որն ուրիշների նկատմամբ ոչ հարգալից վերաբերմունք է արտահայտում կամ վնաս է հասցնում ուրիշի, օրինակ՝ սուտը, գողությունը, իհարկե, չի կարող ներողամտության արժանանալ: Այսպիսի վարքի նկատմամբ չենք կարող հանդուրժող լինել: Նաև, հանդուրժողականությունը նշանակում է վարվել ուրիշների նկատմամբ այնպես, ինչպես կամենում ենք, որ մեզ հետ վարվեն:

Հանդուրժողականության հասկացությունը հասկանալուն ձեզ կօգնի նաև նրա հակառակ հասկացության՝ անհանդուրժողականության դրսևորումների ուսումնասիրումը: Անհանդուրժողական վարքի հիմքն է հանդիսանում որոշակի մարդկանց հավատը, որ նրանց համոզմունքը, արժեքային համակարգը, կենսակերպը ուրիշներից լավն է: Այսպիսի վերաբերմունքը առաջացնում է տարբերվող անձի խտրականություն: Աննողամտությունը բռնություն է առաջացնում ոչ միայն անհատների, այլև՝ ազգերի և պետությունների միջև: Պետությունների միջև բռնությունն ավարտվում է պատերազմով: Իսկ հանդուրժողականության հիմնական էությունը պատերազմի մշակույթի փոխարինումն է խաղաղության մշակույթով: Հենց անհանդուրժողական վարքն է խանգարում մարդկանց խաղաղ համագոյակցությանը:

Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարը

ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԵՆ.

- ուրիշներին անարգելը,
- ծաղրը,
- մեկուսացումը,
- բռնությունը,
- վախեցնելը, սպառնալը,
- ռասիզմը՝ նախօրոք ստեղծված բացասական կարծիքը մարդկանց խմբերի նկատմամբ՝ ըստ ֆիզիկական բնութագրիչների,
- ֆաշիզմը՝ գաղափարախոսություն, որը ձգտում է տոտալիտարիզմի, նրան բնորոշ է ժողովրդավարական

ԲԱՌԱՐԱՆ

ՌԱՍԻԶՄ - տեսակետ, ըստ որի մարդկանց մի ռասան ավելի լավն է մյուսից:

դրսևորումների սահմանափակում, սեփական ազգի մեծարում և նրա մշակույթի հազվագյուտության պնդում,

- շահագործումը՝ որևէ մեկի կամ որևէ բանի անարդարացի, սեփական շահերի համար օգտագործումը,
- իմպերիալիզմը՝ պետության կողմից իր սահմաններից դուրս իշխանության տարածումը և վարչական միավորների ստեղծումը,
- կրոնական և մշակութային խորհրդանշանների պղծումը,
- վանդալիզմը՝ հասարակությանը կամ մասնավոր անձին պատկանող մշակութային և նյութական արժեքների փսասումը և ոչնչացումը,
- արտաքսումը,
- **ապարտեիդը**՝ ռասայական խտրականության ամենադաժան ձևը, որը ռասայական հատկանշով տարբերվող որոշակի խմբերի համար քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային խափանումով է արտահայտվում,
- ռեպրեսիաները՝ ճնշամիջոցները՝ տարբեր տիպի ֆիզիկական և հոգեբանական ճնշումները,
- **ցեղասպանությունը**՝ որևէ էթնիկական, ազգային, կրոնական կամ ռասայական խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացումը:

Որպեսզի հաղթահարենք անհանդուրժողական վարքի, խտրականության հետևանքը՝ բռնությունը, պետք է իմանանք այն հարուցող պատճառները: Ամեն անհանդուրժողական վարքի, այդ թվում խտրականության հիմնական պատճառը նեգատիվ՝ բացասական **կարծրատիպերն** են, նախապաշարմունքները և **էթնոցենտրիզմը:**

Առանձին-առանձին քննարկենք նրանցից յուրաքանչյուրը:

Էթնոցենտրիզմը էթնիկ խմբի կողմից սեփական ավանդույթների և արժեքների գերազանցված գնահատումն է և սեփական խմբի՝ որպես գերակա ներկայացումը: Էթնոցենտրիզմն էթնոսների միջև հակամարտություններ է առաջացնում:

Նախապաշարմունքը՝ նախօրոք ձևավորված հայացքը խանգարում է իրատեսորեն տեսնել և գնահատել մարդկանց և ընթացիկ իրադարձությունները: Նախապաշարմունքը մինչև մարդու կողմից երկրորդ մարդուն կամ երևույթներին ծանոթանալը ստեղծված սխալ կարծիք է, քանի որ գնահատողն ընդհանրապես ծանոթ չէ կամ վատ է ծանոթ քննարկվելիք հարցին:

Կարծրատիպերը հայացքներ են, որ տարբեր պատճառներով ձևավորվում են մեզ մոտ մարդու, երևույթների, մարդկանց խմբերի մասին: «Ստերեոտիպը»՝ կարծրատիպը, հունարեն բառ է: Այն բաղկացած է երկու մասից: Առաջին մասը՝ «ստերեո» նշանակում է կայուն, իսկ երկրորդը՝ «տիպոս»-ը՝ դրոշմ: Կարծրատիպը հանդիսանում է մարդու կողմից վարքի, նորմերի, ավանդույթների, այլ արժեքների արդեն ձևավորված հայացքներով գնահատում:

ԲԱՌԱՐԱՆ

ԱՊԱՐՏԵԻԴ - ռասիստական բաժանման մի ձև, որը կառավարող խավն իրականացնում է տեղի բնակչության նկատմամբ:

ՌԱՍՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - մարդուն ըստ ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգային կամ էթնիկական պատկանելության ցանկացած սահմանափակման, տարբերության, բացառության կամ առավելության շնորհման գործընթաց: Ռասայական խտրականության ժամանակ տեղի է ունենում քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ ոլորտում մարդու անհատական իրավունքների և հիմնարար ազատությունների, հավասարության սկզբունքների ճանաչման և նրա իրականացման հնարավորությունների հերքում, նվաստացում:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - հատուկ կանոնավոր գործողություններ (սպանություն, ֆիզիկական և մտավոր փսասի պատճառում, ծնելիության սահմանափակում, երեխաների բռնի հեռացում հայրենի վայրերից), ինչը նպատակադրում է կոնկրետ էթնիկական, քաղաքական կամ մշակութային խմբի ոչնչացում կամ նրա լեզվի, դավանանքի և մշակույթի ոչնչացում:

ԿԱՐԾՐԱՏԻՊ - մարդկանց կամ գաղափարների անչափ պարզեցված, ընդհանրացված և հաճախ չգիտակցված ընկալում, որը, հնարավոր է, որ առաջացնի նախօրոք ստեղծված բացասական կարծիք և խտրականություն:

ԷԹՆՈՑԵՆՏՐԻԶՄ - տեսակետ, ըստ որի մի էթնիկական խումբը գերազանցում է մյուսին:

Կարծրատիպի ստեղծման ժամանակ տեղի է ունենում մարդու կամ մարդկանց խմբի մասին մեր տեսակետի ընդհանրացում: Հասարակությունը հաճախ անարդարացիորեն ստեղծում և մշտապես հիմնում է որոշ կարծրատիպեր, որոնք հաճախ դառնում են անարդարացի հետապնդման և խտրականության պատճառ: Ինչո՞ւ է տեղի ունենում այսպես: Որովհետև յուրաքանչյուր նման դեպքում մենք ընդհանրացնում ենք մեր տեսակետը: Այս ընդհանրացման հիմքը անցյալում ստացած փորձն է, գրքերում, թերթերում և ամսագրերում կարդացած պատմությունները, հեռուստացույցից կամ ընտանիքի անդամներից կամ ընկերներից ստացած տեղեկատվությունը, դիտած կինոֆիլմերը: Հաճախ մենք ենք ստեղծում նախնական տրամադրվածություն անհատի նկատմամբ՝ հիմնվելով ոչ թե իրական փաստերի, այլ կարծրատիպերի վրա: Հաճախ ենք հայտնվում կարծրատիպերի ազդեցության տակ, երբ գործը վերաբերում է հասարակության այն խմբին, որի հետ չունենք կանոնավոր շփում: Հին ամերիկական կինոֆիլմերում աֆրոամերիկացիները ներկայացված էին որպես տգետներ, ծույլեր և դաժաններ, ինչը նպաստել է աֆրոամերիկացիների մասին սխալ կարծրատիպի ձևավորմանը:

Կարծրատիպի վառ օրինակ են գենդերային կարծրատիպերը, երբ կանայք և տղամարդիկ երկրի հասարակական և քաղաքական կյանքին հավասարապես չեն մասնակցում, նրանց դերերը հավասարապես չեն բաշխվում:

Քննարկենք Վրաստանում հաստատված գենդերային տարածված կարծրատիպերից մեկը.

Կնոջ տեղը տանն է, կնոջ գլխավոր պարտականությունը տնային տնտեսուհի լինելն է:

Ինչպե՞ս հաղթահարենք սա և, ընդհանրապես, ցանկացած կարծրատիպ:

- Կարծրատիպի հաղթահարման նպատակով պետք է հավաքեք օրինակներ, որոնք վերացնում են կարծրատիպը:
- Հրաժարվե՛ք բացասական կարծրատիպերից:
- Ավելի լավ ծանոթացեք այն մարդկանց խմբի ավանդույթներին, մշակույթին և այլն, ում մասին ստեղծվել է կարծրատիպը:

Գենդերային կարծրատիպն աստիճանաբար փշրվում է: Կնոջ դերը և իմիջն այսօր նշանակալիորեն փոխվել է: Հաճախ ենք հանդիպում գործարար իմիջով կնոջ՝ պաշտոնական շարժուձևով և պաշտոնական հագուստ հագած:

Հնարավոր է, որ գործնական իմիջով տիկինը բոլորովին էլ գործարարությամբ չլինի զբաղված, և նրա վարքաձևը և հագուստը սոսկ պատրանք լինեն:

Հենց սա է կարծրատիպի ազգակից տերմինի՝ իմիջի հիմնական էությունը: Իմիջը կոնկրետ առարկայի, մարդու մասին արհեստականորեն, հատուկ ստեղծված պատկերացում է: Այն հաճախ

ԲԱՌԱՐԱՆ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ - (լատ. propaganda, բառացիորեն նշանակում է՝ ենթակա է տարածման) քարոզչության միջոցով գաղափարական ճնշում է իրականացվում մարդկանց հայացքների, կարծիքների, ընդհանուր գիտակցության վրա տարբեր խորհրդանշաններով (բառերով, նշանաբաններով, երաժշտությամբ, լրատվամիջոցներով և այլն): Նպատակին հասնելու համար քարոզիչը (անձը, որը քարոզչություն է ծավալում), շրջանցում է կամ խեղաթյուրում նշանակալի փաստերը և աշխատում լսարանին մատուցել միայն իր համար ընդունելի տեղեկությունները:

ոչ թե փաստերի վրա է հիմնվում, այլ՝ հեղինակության, հույզերի, կարծիքների և այլն: Իմիջը խանգարում է օբյեկտիվ իրականության ընկալմանը: Իմիջի ստեղծումը անչափ կարևոր է գովազդում, **քարոզչության** մեջ: «Զանգվածային լրատվամիջոցները» հաճախ իրական դեմքերի փոխարեն հենց կարծրատիպերը և իմիջն են կիրառում:

«Իմ երազանքն է, որ իմ չորս զավակները մի հոյակապ օր ապրեն այնպիսի երկրում, որտեղ նրանց մասին կդատեն ըստ իրենց հատկանիշների, բնավորության, այլ ոչ թե՝ ըստ մաշկի գույնի»:

Մարդու իրավունքների պաշտպան Մարտին Լյութեր Քինգի խոսքը՝ արտասանված 1963 թվականին նախագահ Լինքոլնի հուշակոթողի մոտ, ում վաստակն էր ստրկության վերացումը ԱՄՆ-ում:

«Չդատապարտե՛ս հարևանիդ, մինչև գոնե երեք օր քեզ նրա տեղում չպատկերացնես»:

Հյուսիսամերիկյան ասացվածք

Խտրականությունը հաճախ հարուցվում է անվստահությունից: Այն, ինչը չգիտենք, տարօրինակ է թվում և այդ պատճառով էլ վախենում ենք տարբերվողից: Նրան կասկածանքով ենք մոտենում:

«Մարդիկ հաճախ ատում են միմյանց, քանի որ վախենում են իրարից, քանի որ չեն ճանաչում միմյանց …»

Մարտին Լյութեր Քինգ

Ամենօրյա կյանքում խտրականությունը կարող է արտահայտվել կրթության և սոցիալական ծառայություններ ստանալու սահմանափակմամբ, ծաղրով, գործարարության և քաղաքականության մեջ կանանց և փոքրամասնությունների կարիերային առաջընթացին արգելքներ ստեղծելով:

Հաճախ փոքրամասնությունների խմբերը դաժանության զոհ են դառնում միայն այն պատճառով, որ նրանք փոքրամասնություն են հանդիսանում: Ցավոք, այսօր դեռևս գոյություն ունեն ռասիստական կազմակերպություններ՝ «Սպիտակ դանակներ», «Նեոնացիստներ», «Սկինհեդներ» (skinhead – սափրած գլխով) և այլն, որոնք բացահայտորեն հայտարարում են իրենց խտրական և ռասիստական հայացքները:

ԽԱՐԱՆ

Խտրականության ևս մեկ պատճառ է խարանը: Խարանը սխալ «կարծրացած» տեսակետ է, կպցրած պիտակ, որն առաջացնում է անհատի կամ խմբի առանձնացում կամ մեկուսացում:

Խարանված մարդու խտրականությանը հաճախ հետևում են բախումը և բռնությունը: Խարանման հետևանքով տեղի է ունենում մարդու վտարում հասարակությունից: Խարանը բազմաչափ հասկացություն է: Այն կարող է լինել հոգեբանական, իրավաբանական, սոցիալական: Խարանի հանդիպում ենք և՛ հասարակությունում, և՛ ընտանիքում: Մենք կարող ենք դատապարտել և մեկուսացնել ուրիշին այն պատճառով, որ նա մեզանից տարբեր է, նրանից վախենում ենք կամ նրան չենք համարում այն հասարակության լիարժեք անդամ, որին պատկանում ենք մենք: Խարանման «զոհեր» առավելապես դառնում են սահմանափակ հնարավորություններով մարդիկ, որոշակի հիվանդություններ (օրինակ՝ ՄԻԱՀ/ՁԻԱՀ) ունեցող անձինք, սոցիալապես անապահով խմբերի անդամները, վտարանդիները, փախստականները և այլն:

Միայն հասարակության առողջ վերաբերմունքով կարելի է խուսափել հասարակության որոշակի անդամների խարանումից: Ամեն անհատ պետք է գիտակցի, որ ցանկացած մարդ իրավունք ունի լինելու այն հասարակության անդամը, որում ապրում է ինքը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽԱՐԱՆ

Խարանը և խտրականությունը, որ կապվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ, մասամբ վախի և թյուրիմացության հիման վրա է զարգացել: ՄԻԱՎ-ի ախտանիշը առաջացնում էր խուճապ, վախ և անօգնականության զգացում: Այսօր հայտնի է, որ արդեն հնարավոր է բուժել ՁԻԱՀ-ը, և հիվանդ մարդիկ, հնարավոր է, բազմաթիվ տարիներ ապրեն: Չնայած նրան, որ, ընդհանուր առմամբ, հիվանդության և վարակի նկատմամբ վախը դեռևս գոյություն ունի, ինչը վարակվածների նկատմամբ հասարակության կտրուկ բացասական վերաբերմունքով է պայմանավորված, խարանի պատճառով, ՄԻԱՎ-վարակակիրները վախենում են բացահայտել իրենց կարգավիճակը, նրանք գերադասում են խուսափել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետազոտումից, իսկ սա նպաստում է վարակի տարածմանը: Հիվանդության նկատմամբ այսպիսի մոտեցում առաջացրել է հասարակության բացասական վերաբերմունքը վարակակիրների նկատմամբ:

Օրինակ՝ Վրաստանի քաղաքներից մեկի բուժհաստատությունում արյան փոխներարկման հետևանքով վարակվել է երիտասարդ հղի մի կին: Նրա երեխան ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ է ծնվել: Հետաքննության արդյունքում հայտնաբերվել է, որ կնոջը փոխներարկված արյունը վերցրել են այսպես կոչված «լուսամուտի» շրջանում: Սա այն շրջանն է, երբ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վարակը գտնվում է «թաքնված» վիճակում: Հենց սա է դարձել կնոջ վարակման պատճառը: Դատարանը տուժածին մի փոքր փոխհատուցում է շնորհել: Այժմ ընտանիքն ապրում է քաղաքի արվարձանում, ծայրահեղ չքավորության մեջ: Նրանք չեն աշխատում, նրանց հետ ոչ ոք չի շփվում:

ԲԱՌԱՐԱՆ

ԽԱՐԱՆ - Հին Հունաստանում ստրուկի կամ հանցագործի մարմնի վրա արված դրոշմ: Մարդու նշմարում՝ բացասական խարանով:

ՄԱՐԳԻՆԱԼ - սոցիալական խմբից դուրս գտնվող, արտաքսված:

Մտածեք, թե ինչու է ընտանիքն այս վիճակում: Ո՞վ պետք է հոգ տանի այսպիսի մարդկանց մասին:

ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵՆՔ ԽԱՐԱՆԻՑ

Պետությունը սկսել է պայքարել խարանի դեմ: Նա օրենսդրություններով աշխատում է «մեկուսացված» խմբերին ինտեգրել հասարակությանը: Օրինակ՝ պետությունը հրապարակել է «Վրաստանի օրենք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին», որտեղ քննարկված է պետության քաղաքականությունը հիվանդության նկատմամբ: Օրենքը պարտավորեցնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց պաշտպանել վարակակիրների իրավունքները և արժանապատվությունը: Միևնույն ժամանակ օրենքը պետք է ապահովի հիվանդների նկատմամբ խտրականությունից խուսափում:

Պետությունը կազմել է նաև փախստականների, սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակությանն ինտեգրման ռազմավարություններ:

2011 թվականի մարտին Ճապոնիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի և նրանից ծագած ցունամիի հետևանքով զոհվել են հազարավոր մարդիկ: Ոչնչացել են գյուղեր և քաղաքներ: Բացի տեղական ավերումներից, աղետը գլոբալ աղետի առջև է կանգնեցրել մարդկությանը: Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայում ատոմային էլեկտրակայանի վնասումը առաջացրել է ռադիացիայի արտահոսք: Հարող տարածքում մարդկանց ռադիացիոն ճառագայթման վտանգ է առաջացել: Աշխարհի լրատվամիջոցները վախ են հայտնում, որ տեղի կունենա ճառագայթված մարդկանց խարանում:

- Մտածեք, թե ինչու կարող է տեղի ունենալ այդ մարդկանց խարանում:
- Ի՞նչ կառաջացնի այսպիսի վերաբերմունքն այս մարդկանց նկատմամբ:

Այսպիսով, մարդիկ բոլորը միատեսակ և, միևնույն ժամանակ, տարբեր են: Մենք միմյանցից տարբերվում ենք ֆիզիկական կառուցվածքով, մաշկի գույնով, պատկանում ենք տարբեր մշակույթների: Մեզանից ոմանք հաջողակ են, ոմանք՝ պակաս հաջողակ, սակայն, չնայած դրան, բոլորս հավասար ենք: Մենք նման ենք և հավասար ամենուրեք՝ դասասենյակում, դպրոցում, բակում, թաղամասում, քաղաքում, սեփական երկրում, աշխարհում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Գտե՛ք հանդուրժողական և անհանդուրժողական դրսևորումներ Վրաստանի պատմությունից, գրականությունից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

Ծանոթացե՛ք «Կեղտոտ սպիտակեղենը» իրավիճակային պատմությանը:

ԿԵՂՏՈՏ ՍՊԻՏԱԿԵՂԵՆԸ

Երիտասարդ զույգը նոր բնակարան էր տեղափոխվել: Առավոտյան նոր արթնանացած կինը լուսամուտից դուրս նայեց և տեսավ հարևանին, որը սպիտակեղենն էր փռում չորացնելու:

– Նայի՛ր, ինչ կեղտոտ սպիտակեղեն է, - ասաց կինն ամուսնուն:

Ամուսինը ուշադրություն չդարձրեց կնոջը, քանի որ թերթ էր կարդում:

– Երևի վատ օճառ է օգտագործում կամ բոլորովին չգիտի լվացք անել, լավ կլիներ, որ որևէ մեկը սովորեցներ:

Այսպես էր լինում միշտ, երբ հարևանը լվացք էր փռում: Երիտասարդ կինը չէր կարող թաքցնել իր զարմանքը հարևանի փնթիության վրա: Մի գեղեցիկ առավոտ նա կրկին լուսամուտից դուրս նայեց և բացականչեց.

– Նայի՛ր, այսօր սպիտակեղենը մաքուր է, ինչպես երևում է, լվացք անել է սովորել:

– Ո՛չ, սիրելի՛ս, - ասաց ամուսինը,- բանն այն է, որ այսօր ես մաքրել եմ մեր լուսամուտի ապակին:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ.

- Ինչո՞ւ էր կնոջ մոտ հարևանի մասին սխալ պատկերացում ստեղծվել:
- Իրավիճակային պատմությունը կապեք կարծրատիպի և նախապաշարմունքի ստեղծման հետ:
- Վերլուծե՛ք կնոջ վարքը:
- Ինչպե՞ս վարվեց ամուսինը: Ինչպե՞ս կարող էր վարվել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Սխեմա 1-ում տրված է հանդուրժողական և անհանդուրժողական վարքերի ցանկ: Ծանոթացե՛ք ստորև տրված սխեմային: Մտածեք և ընտրեք երեք անհանդուրժողական վարք, որ բնորոշ է ձեզ, կամ պատահաբար եք արել, կամ ձեր նկատմամբ իրականացրել է որևէ մեկը: Զեր զույգի հետ կիսվեք ձեր կարծիքներով:

ՍԽԵՄԱ 1

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ	ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ
ՈՒՐԻՇՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ	ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱՆԱՐԳԱՆՔ, ԾԱՂՐ
ՁԵԶԱՆԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԱՆՀԱՏԻ ՀԱՐԳԱՆՔ	ՁԵԶԱՆԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԱՆՀԱՏԻ ԱՆՏԵՍՈՒՄ, ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ
ՏԱՐԲԵՐՎՈՂ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐԳԱՆՔ	ՏԱՐԲԵՐՎՈՂ ԿԱՐԾԻՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ
ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՉԴԱՏԱՊԱՐՏԵԼ	ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՄԻԱՅՆ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՈՎ ԳՆԱՀԱՏԵԼ
ՀՈՒՄԱՆԻԶՄ՝ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՍԻՐԵԼ, ՆՐԱՆՑ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԳԵԼ	ԱՆՀԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ
ԱԼՏՐՈՒԻԶՄ ԿԱՄ ՈՒՐԻՇԻ ՀԱՆԴԵՊ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ	ՈՉ ՈՔԻ ՄԱՍԻՆ ՀՈԳ ՉԵՔ ՏԱՆՈՒՄ
ԿԱՐԵԿՑԱՆՔ, ՆՐԱ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ	ՈՉ ՈՔԻ ՉԵՔ ԿԱՐԵԿՑՈՒՄ
ԼՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ	ՉԵՔ ՍԻՐՈՒՄ ԼՍԵԼ
ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԶՈՒՍՊ ԼԻՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ԵՐԲ ՈՐԵՎԷ ԲԱՆ ՉԵՍ ՀԱՎԱՆՈՒՄ, ԱԳՐԵՍԻԱ ՉԵՍ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ	ԱՆՀԱՄԲԵՐ ԵՔ, ՀԵՇՏ ԵՔ ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԻՑ
ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ	ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՐԱՑՐԵ՛Ք ՍԽԵՄԱՆ.

ՄՏԱԾԵ՛Ք/ԶՈ՛ՒՅԳ ԿԱԶՄԵՔ/ԿԻՍՎԵ՛Ք ՆՐԱ ՀԵՏ

ՍԽԵՄԱ 2

ՀԱՐՑ	ԵՍ ԻՆՉ ՄՏԱԾԵՑԻ	ԶՈՒՅԳՍ ԻՆՉ ՄՏԱԾԵՑ	ԻՆՉ ՓՈԽԱՆԱԿԵՑԻՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ
ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ ՈՒՆԵՔ:			
ԻՆՉՊԻՍԻ՞ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ ԵՔ ԴՐՍԵՎՈՐԵԼ:			
ՈՒՐԻՇԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵ՞Լ Է ԱՐԴՅՈՔ ԲԱԽՈՒՄ ԿԱՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ: ԻՆՉՈ՞Ւ:			
ԻՆՉՊԵ՞Ս ԵՔ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ:			

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4

Նկարը նկարագրեք երեք նախադասությամբ: Բացատրեք, թե ըստ ձեզ ինչ է նշանակում սոցիալապես անապահով մարդ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5

- Օրինակներ բերեք, թե ինչպես կարելի է ամենօրյա կյանքում հաստատել հանդուրժողական հայացքներ:
- Ինչո՞ւ է դա անհրաժեշտ, և ի՞նչ կարող է անել մեզանից յուրաքանչյուրը դրա համար:
- Ինչո՞ւ են որոշ մարդիկ համախմբվում այնպիսի միավորումների շուրջ, ինչպիսին սկինհեդներն են:
- Խտրականությունը և սնոտիապաշտությունը վնասակար են ոչ միայն «զոհի», այլև իրականացնողի համար: Ինչո՞ւ:
- Ի՞նչ պետք է անեք ձեր շուրջն առկա սնոտիապաշտության վերացման համար:
- Նկարագրեք օրինակ, թե ինչպես կարող է ձևավորվել կարծրատիպը:
- Բերեք կարծրատիպի օրինակ՝ ի դեմս հեռուստահաղորդման կամ կինոֆիլմի հերոսի:
- Թվարկեք ուսումնական գործընթացի հետ կապված կարծրատիպեր, օրինակ՝ «Անհրաժեշտ չէ դասավանդել, այսպես կոչված, երկրորդական առարկաները» և այլն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6

Ավարտեք նախադասությունները.

Բոլոր մաթեմատիկոսները ——————————————————————————————
——— են:

Ֆուտբոլիստները ——————————————————————————————————
——— են:

Գեղեցիկ կանայք ——————————————————————————————————
——— են:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7



Ես տարբեր եմ:

• Թվարկե՛ք, թե մարդիկ ինչով են տարբերվում միմյանցից:

• Ինչո՞ւ է երբեմն մարդու տարբեր լինելը դառնում նրա հանդեպ խտրական վերաբերմունքի պատճառ: Բերե՛ք օրինակներ:

• Ի՞նչ պետք է արվի այսպիսի խտրականությունն արմատախիլ անելու համար:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8

Կարդացե՛ք և վերլուծե՛ք տեքստը.

Նա չի աշխատում

– Քանի՞ երեխա ունեք,-հարցրեց բժիշկը:

– Վեց,– պատասխանեց նա:

– Ձեր կինն աշխատո՞ւմ է:

– Տանից դուրս չի գալիս:

– Հասկանալի է: Ի՞նչ է անում ամբողջ օրը:

– Արթնանում է առավոտյան ժամը 4-ին, ջուր է բերում, փայտ, կրակ է վառում և նախաճաշ պատրաստում: Հետո գնում է գետափ, լվացք է անում: Դրանից հետո շուկա է հասնում՝ անհրաժեշտ սննդամթերք գնելու: Այնուհետև ճաշ է պատրաստում:

– Դուք կեսօրին տուն վերադառնո՞ւմ եք:

– Ո՛չ, ո՛չ, կինս է արտ գալիս, ինձ կերակուր բերում, արտը տնից երեք կիլոմետր հեռավորության վրա է:

– Հետո՞:

– Կինս հավեր ու խոզեր է պահում, և իհարկե, ամբողջ օրը հետևում է երեխաներին, հետո էլ ընթրիք է պատրաստում, որն իմ գալու պահին միշտ պատրաստ է լինում:

– Ընթրիքից հետո ձեր կինը քնելո՞ւ է գնում:

– Ո՛չ, ես եմ գնում քնելու: Իսկ նա մինչև ժամը ինը ինչ-որ տնային գործեր է ավարտին հասցնում:

– Բայց դուք ասացիք, որ ձեր կինը չի աշխատում:

– Ո՛չ, ես ասացի, որ նա տանից դուրս չի գալիս:

• Ո՞ւմ իրավունքներն են խախտվում այս իրավիճակում: Ի՞նչ տիպի խտրականության հետ գործ ունենք այս դեպքում:

• Ի՞նչ պետք է անենք դասասենյակում կամ տանը, որպեսզի միմյանց հետ որպես հավասարներ վարվենք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9

«Ցանկալի ուղեկիցը»

Պատկերացրեք, որ ճանապարհորդում եք գնացքով: Ձեր առջև է ենթադրյալ ուղևորների ցանկը: Եթե ընտրության հնարավորություն ունենաք, տվյալ ցուցակից ո՞ր երեք ուղեկցին կընտրեք ճանապարհորդելիս: Հիմնավորե՛ք՝ ինչո՞ւ:

Հնարավոր ուղևորների ցանկ.

- գնչու,
- պանկ,
- երիտասարդ տղամարդ, ՄԻԱՎ-վարակակիր,
- աղքատ հագնված կին՝ փոքրիկ երեխայի հետ,
- սեամորթ ուսանող,
- դեռահաս՝ թմրամոլի արտաքինով,
- ազատված կալանավոր,
- ազգային տարազով հնդիկ,
- ոստիկան,
- սայլակի մեջ նստած սահմանափակ հնարավորություններով մարդ,
- չինացի, որը տարօրինակ և տհաճ հոտով կերակուր է ուտում,
- անհասկանալի լեզվով խոսող մարդ:

Պատասխանե՛ք հարցերին.

- Ի՞նչ զգացմունքներ տիրեցին ձեզ այս հանձնարարության կատարման ժամանակ:
- Հե՞շտ էր ընտրություն անելը: Ինչո՞ւ:
- Ինչո՞վ էր պայմանավորված տվյալ առավելությունը:
- Ի՞նչ պատճառներով չընտրեցիք այս ցուցակից որևէ մեկին: Ի՞նչը խանգարեց ձեզ ընտրություն անելիս:
- Ո՞ր հայացքները խանգարեցին ձեզ՝ ազատ ընտրություն անելու հարցում:
- Որքանո՞վ են համապատասխանում ձեր հայացքներն իրականությանը: Այս ցուցակում բոլորն ունե՞ն այս հատկությունները:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - III ԱՍՏԻՃԱՆ. ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Նախագծի վրա աշխատանքի երրորդ փուլում ամբողջ դասարանը պետք է աշխատի ընտրված հիմնախնդրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների հայթայթման վրա: Փաստորեն, պետք է անցկացնեք փոքր մասշտաբի հետազոտություն: Արժեքավոր տեղեկության հայթայթման համար ստորև թվարկված տեղեկատվական միջոցներից ընտրեք կարևորը:

Որպեսզի հետազոտմանը կարողանաք ընդգրկել բոլոր տեղեկատվական աղբյուրները, կրկին խմբերի բաժանվեք, և յուրաքանչյուր խումբ հետազոտման համար պետք է ընտրի տարբեր տեղեկատվական աղբյուրներ: Ստացած տեղեկատվության նշման համար ձեզ պիտանի կլինեն նախագծի առաջին աստիճանում (էջ 19-21) տրված հարցարանները, նաև ստորև տրված **հրապարակումներից, հոդվածներից և հարցազրույցներից դուրս գրված տեղեկատվության փաստագրման ձևը:** Եթե որևէ մասնավոր անձ կարող է հիմնախնդրի մասին արժեքավոր տեղեկություն մատուցել, կարող եք նրան հյուրի կարգավիճակով հրավիրել դասարան: Տեղեկատվությունը հնարավոր է հավաքել ինչպես առանձնազրույցի, այնպես էլ հեռախոսազրույցի և գրավոր զրույցի միջոցով:

Տեղեկատվական միջոցներ.

1. գրադարաններ,
2. տպագիր մամուլ,
3. պրոֆեսորա-դասախոսական կազմ,
4. փաստաբաններ և դատավորներ,
5. համայնքում առկա կազմակերպություններ և շահերի խմբեր,
6. օրենսդրական կառույցներ,
7. վարչական գործակալություններ,
8. էլեկտրոնային տեղեկատվական միջոցներ:

Հրապարակումներից, հոդվածներից և հարցազրույցներից դուրս գրված տեղեկատվության փաստագրման ձև

Խմբի անդամների անունները ----------

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ ----------
Կազմակերպություն, որտեղ գտել եք տեղեկատվության աղբյուրը ----------
---

Հետազոտվելիք հիմնախնդրի անվանումը ----------
1. Տեղեկատվության աղբյուրը
ա. անվանում/վերնագիր ----------
բ. հեղինակ ----------
գ. ամիս, ամսաթիվ, տարեթիվ ----------

2. Գրի առեք տեղեկությունը, որը կօգնի ձեզ պատասխանել հետազոտվելիք հիմնախնդրի հետ կապված կարևոր հարցերին:
ա. Որքանո՞վ լուրջ է այս հիմնախնդիրը ձեր համայնքի համար: ----------
---

բ. Որքանո՞վ լայն է տարածված այս հիմնախնդիրը մեր երկրում: ----------
---

գ. Ձեր կարծիքով, ո՞րն է ճիշտ:
- Ոչ մի օրենք չի կարգավորում այս հիմնախնդիրը:
  Այո --- Ոչ -----
- Օրենքը, որ կարգավորում է այս հիմնախնդիրը, ադեկվատ չէ:
  Այո --- Ոչ ----
- Օրենքը, որ կարգավորում է այս հիմնախնդիրը, ադեկվատ է, սակայն համապատասխանաբար չի պահպանված:
  Այո ------- Ոչ -------

դ. Իշխանության ո՞ր աստիճանը կամ մարմինն է պատասխանատու այս հիմնախնդրի կարգավորման համար: Ի՞նչ միջոցառումներ են նրանք անցկացնում՝ կապված դրա հետ: Բացի իշխանությունից, ո՞վ է պարտավոր հոգալ այս հիմնախնդրի մասին: ----------
---

ե. Համայնքում իշխանության կողմից այդ հիմախնդիրների վճռման հետ կապված կայացրած որոշումների նկատմամբ ի՞նչ հակասություն կա: ----------
---

զ. Ովքե՞ր են այն հիմական խմբերը, կազմակերպությունները և մասնավոր անձինք, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում՝ կապված այս հիմախնդրի հետ: ----------
---

• Ինչո՞ւ են նրանք հետաքրքված այս հիմախնդրով: ----------

• Ի՞նչ դիրքորոշում ունեն: ----------

• Ի՞նչ դրական և բացասական կողմեր ունի նրանց դիրքորոշումը: ----------
---

• Ինչպե՞ս են նրանք աշխատում հարկադրել իշխանությանը ընդունել իրենց դիրքորոշումը: ----
---

է. Ինչպե՞ս կարող ենք ավել տեղեկատվություն հայթայթել՝ կապված նրանց դիրքորոշման հետ:

ը. Ովքե՞ր են այս հիմախնդրի կողմեր հանդիսացող հիմական խմբերը, կազմակերպությունները և մասնավոր անձինք: ----------
---

• Ինչո՞ւ են նրանք հետաքրքված այս հիմախնդրով: ----------

• Ի՞նչ դիրքորոշում ունեն: ----------

• Ի՞նչ դրական և բացասական կողմեր ունի նրանց դիրքորոշումը: ----------
---

• Ինչպե՞ս են նրանք աշխատում հարկադրել իշխանությանը ընդունել իրենց դիրքորոշումը: --------
---

թ. Եթե դասարանը մշակի այս հիմախնդրի վճռմանը միտված ռազմավարություն, ինչպե՞ս հարկադրենք իշխանությանն ընդունել այն: ----------
---

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԻՆՉ Է ԲՈՒԼԻՆԳԸ

ԴԱՍ 4

Խտրականության մասին խոսելիս՝ չենք կարող շրջանցել անհանդուրժողական վարքերի միասնականությունը, որը «բուլինգ» են կոչում: «Բուլինգ» տերմինը նշանակում է ֆիզիկական և հոգեբանական բռնություն, որն իրականացվում է երեխայի նկատմամբ համադասարանցիների կամ այլ խմբի կողմից: Գոյություն ունի բուլինգի երեք տեսակ՝ հուզական, բառային և ֆիզիկական: Բուլինգին բնորոշ վարքերն են՝ ստորացուցիչ մականուններով կոչելը, ծաղրելը, խմբից կամ ընդհանրապես գործունեությունից դուրս մղելը, անհարգալից բառերով դիմելը, իրերը խլելը, գրավոր կամ բանավոր անարգանքը, սպառնալիքը, վախեցնելը, հրելը, բռունցքներով և ոտքով ծեծելը, զրպարտելը, «զոհին» անհարմար, ոչ հարմարավետ վիճակի մեջ դնելը, սեփական ցանկությանն հակառակ գործել հարկադրելը:

- Մտածեք, երբևէ հայտնվե՞լ եք նման իրավիճակում:
- Արդյոք դուք չե՞ք վարվել ուրիշի հետ այդպես:

Վրացերենում բուլինգին համապատասխան են շառոտությունը, կռվարարությունը, ղոչությունը: Բուլինգը լայնորեն տարածված է ժամանակակից աշխարհում: Մի շարք երկրներում բուլինգի զոհերին օրենքն է պաշտպանում: Եթե խորանանք բառի ստուգաբանության մեջ, կտեսնենք, որ տերմինը ծագում է անգլերեն “bull” բառից, ինչը վրացերեն «եզ» է նշանակում: Եթե զուգահեռ անցկացնենք «բուլինգ»-ի և „ցոհո“- «ղոչ» բառից բխող, նման բովանդակություն ունեցող „ցոհոծա“ - «ղոչություն» բառերի միջև, ինչը ոչխարի հոտի առաջնորդ է նշանակում, ապա ընդհանրությունն ակնառու կդառնա: Իսկապես, հաճախ բռնակալ, ագրեսոր դեռահասն աշխատում է ուժեղ լինել, ղեկավարել, ստանձնել առաջնորդի դերը: Ցավոք, առաջնորդի այս լավագույն հատկանիշները բռնություն նախաձեռնողը վատ է կիրառում: Հաճախ կոպտում է ուսուցչին, ծնողներին, իր քույր-եղբայրներին, հասակակիցներին: Ագրեսոր դեռահասը բնութագրվում է չափից ավելի էներգիայով, իր մասին չափազանցված դրական կամ բացասական պատկերացմամբ, ուրիշներին բռնանալու և հրամայելու ցանկությամբ: Նրա մոտ վախ է առաջանում, որ ինքը կդառնա բռնության զոհ: Նա ցանկանում է ուշադրություն գրավել, դժվարանում է ընկերություն անել, չունի հանցանքի ապրում, չի կարող սատարել ուրիշներին: Երբեմն երիտասարդներն առանց մտածելու, միամտորեն ցուցադրում են իրենց ագրեսիվ զգացմունքները: Ցավոք այսպիսի գործողությունը կարող է ֆիզիկական և հոգեբանական փսաս հասցնել «զոհին»:

Դեռահաս զոհը հաճախ տարբեր է հասակակիցներից: Նա աչքի ընկնող չէ, փոքրիկ է և թույլ: Փախչում է աղմկոտ հավաքույթներից:

Նա կարող է ունենալ սուր դրսևորված հատկանիշներ: Օրինակ՝ լինել ուրիշներից շատ բարձրահասակ կամ ցածրահասակ, գեր կամ նիհար, աղքատ կամ հարուստ, լինել հանգիստ, լավ սովորել:

Ծանոթացեք և յուրացրեք կանոնները, թե ինչպես պետք է վարվեք, որ չդառնաք բուլինգի զոհ կամ ինքներդ չդառնաք բռնություն գործադրող:

1. Առաջնորդվեք հարաբերության ոսկե կանոնով. «Ուրիշների հետ չվարվեք այնպես, ինչպես որ չեք ուզում վարվեն ձեզ հետ»:
2. Ձեզ պատկերացրեք բռնության զոհի տեղում:
3. Բոլորին ընդունեք այնպիսին, ինչպիսիք իրենք են: Հարգեք յուրաքանչյուր մարդու անհատականությունը:
4. Սովորեք բախումը կարգավորելու խաղաղ ուղիներ:

Բուլինգի և, ընդհանրապես, խտրականության բոլոր դրսևորումների հաղթահարման համար պետք է զինվեք գիտելիքով, պետք է ձեզ մոտ մշակեք հաղորդակցության, երկխոսություն վարելու, ակտիվ ունկնդրելու, էմպաթիայի/կարեկցանքի հմտություններ և կարողություններ և ձևավորեք բացասական վերաբերմունք անհանդուրժողական վարքի նկատմամբ:

Խտրականության հաղթահարման լավագույն միջոցներն են **փոխզիջումը** և համագործակցությունը:

ԲԱՌԱՐԱՆ

ՓՈԽԶԻՋՈՒՄ - փոխզիջման ճանապարհով նվաճված համաձայնություն:

ՓՈԽԶԻՋՈՒՄ

Փոխզիջումը միջանկյալ կետ է երկու կամ մի քանի ծայրահեղ տեսակետների միջև: Սա վիճակ է, երբ երկու կամ մի քանի վիճող կողմերը պատրաստ են որոշակի դիրք զիջել՝ ընդհանուր հետաքրքրությունների և նպատակների հասնելու համար:

Մտաբերե՛ք ձեր կյանքից վեճի դրվագ՝ ծնողների, դասընկերների հետ …

Ի՞նչ արդյունքով ավարտվեց վեճը: Ինչպե՞ս կկարողանայիք խուսափել վեճից:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՓՈԽԶԻՋՄԱՆ ՀԱՄՆԵԼ

Երբ վիճում ենք հասակակիցների կամ ավագների հետ, պետք է հիշենք, որ միշտ չէ, որ հնարավոր է հասնել նրան, ինչ կամենում ենք: Որպեսզի կարողանանք փոխզիջման հասնել, միշտ պետք է իրավիճակին նայենք նաև վիճող մարդու տեսանկյունից: Եթե բոլոր վիճելի իրավիճակներում կարողանանք հասնել փոխզիջման, ձեռք կբերենք մարդկանց վստահություն և հետագայում նաև նրանց աջակցություն: Համաձայնեք մարդկանց հետ և զգացնել տվեք, որ հարգում եք նրանց կարծիքները: Չկարծեք, որ սա նշանակում է, իբր դուք խոստովանում եք նրանց առավելությունը: Սա նշանակում է, որ դուք տիրապետում եք փոխզիջման արվեստին:

Խտրականության հաղթահարման հարցում ձեզ կօգնի նաև մարդու իրավունքների իմացությունը:

Հիշե՛ք, երկխոսությունը կօգնի ձեզ կարգավորել կոնֆլիկտային իրավիճակները:

Ինչպե՞ս վարենք երկխոսությունը:

1. Երկխոսությունը համագործակցություն է, նրա նպատակը համաձայնությունն է:

2. Երկխոսության ժամանակ մի կողմը լսում է մյուսին, որ իմանա և հայտնաբերի դիրքորոշումների միջև տարբերությունները:

3. Երկխոսությունը նպաստում է քննարկվելիք հարցերի վերաբերյալ սխալ հայացքների բացահայտմանը և գնահատմանը:

4. Երկխոսության գործընթացում ընդունելի է դիրքորոշման փոփոխումը:

5. Երկխոսությունը առավելապես հիմնախնդրի վճռման լավագույն միջոցը գտնելու հնարավորություն է տալիս, և ոչ թե քեզ համաձայնեցնում է որևէ կողմի ինքնատիպ դիրքորոշման հետ:

6. Երկխոսությունը զարգացնում է երևույթների նկատմամբ ստեղծագործական, օբյեկտիվ, բազմակողմանի վերաբերմունք:

7. Երկխոսությունը պահանջում է մարդկանց և նրանց գաղափարների հարգանք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Ուշադիր կարդացե՛ք տեքստը.

Դասերից հետո Լաշան, Դաթոն, Միշոն և Էլի մի քանի տղա մսացին դպրոցում՝ բասկետբոլ խաղալու: Թեոնան և Նինոն էլ էին նրանց հետ, նաև Անրին՝ Խմորը (դասարանում այսպես էին նրան կոչում ընկերները): Բոլորը խաղալու ցանկություն արտահայտեցին: Լաշան նայեց Անրիին և բացականչեց.

– Ճկուն չես, նաև չաղո՛ ես:

– Ավելի լավ է այն տղային կանչենք, բոյով է:

– Որի՞ն, - հարցրեց Դաթոն:

– Ահա նրան, այն պեպենոտին: Կարծեմ Գոգիտա է անունը, չէ Ռիժան ավելի լավ է, ավելի է սազում,- պատասխանեց Լաշան:

– Դուք մե՛զ նայեք, աղջիկնե՛ր, բասկետբոլը ձեր գործը չէ:

Անրին ուզում էր բասկետբոլ խաղալ, սակայն հեռու էր կանգնած, ձայն չէր հանում:

Պատասխանե՛ք հարցերին.

- Ինչ եք կարծում, որտե՞ղ է այստեղ անարդարությունը:
- Ձեզ պատկերացրեք Անրիի տեղում: Ի՞նչ կզգաք:
- Թվարկե՛ք գործող անձանց, որոնց տեղում չէիք կամենա լինել: Ինչո՞ւ:

Ի՞նչ կանեիք, եթե նրանց փոխարեն դուք լինեիք:

- Ի՞նչ կանեիք, եթե այսպիսի իրավիճակ ստեղծվեր ձեր դասարանում կամ ձեր բակում:
- Բուլինգի ո՞ր տեսակներն են ցույց տրված իրավիճակում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

Կարդացեք, թե ինչ ձևով կարող է արտահայտված լինել սահմանափակ հնարավորություններով մարդկանց նկատմամբ խտրական վերաբերմունքը.

- Սրճարանում կամ սուպերմարկետում սահմանափակ հնարավորություններով երեխա տեսնելիս՝ մարդիկ սևեռած հայացքով նայում են նրան և խորը հոգոց հանում:
- Մարդիկ երեխայի ծնողին վշտացնող հարցեր են տալիս երեխայի մասին:
- Հանրային և մասնավոր հաստատությունները չունեն սահմանափակ հնարավորություններով մարդկանց համար համապատասխան սարքավորանք և գույք:
- Բարեկամները և մերձավորները խուսափում են սահմանափակ հնարավորություններով մարդկանց հետ շփվելուց:
- Սահմանափակ հնարավորություններով մարդկանց նկատմամբ լսվում են նվաստացուցիչ մականուններ:
- Այս մարդկանց ցանկությունը՝ ուրիշների հետ կիսվել իրենց վշտով և սրտի ցավով, կամ անտեսված է, կամ ուղղակի նրանք ստանում են անտարբեր պատասխան՝ «Ամեն ինչ լավ կլինի»:
- Մտաբերեք, տեսե՞լ եք արդյոք այսպիսի խտրականության օրինակ ձեր շուրջը:
- Ըստ ձեզ, ինչպե՞ս պետք է վարվեք, եթե այսպիսի դեպքի հանդիպեք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Կազմակերպեք դասարանական բանավեճ՝ կապված բուլինգի հետ, որոշեք «զոհի» հնարավոր հիմնախնդիրները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4

Մտաբերե՛ք վրացական ասացվածքներ, առակներ, որտեղ խոսվում է խոսքի ուժի մասին:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - IV ԱՍՏԻՃԱՆ. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎՃՌՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ.

Նախագծի վրա աշխատելու չորրորդ աստիճանում դուք մշակում եք, վերլուծում և ամփոփում հետազոտման հետևանքով ստացած տվյալները: Հիմնվելով ձեռք բերված տեղեկությունների վրա՝ որոնում եք հիմնախնդրի վճռման ուղիներ և պլանավորում, թե ինչպես պետք է հասնեք ցանկալի արդյունքին:

Դուք արդեն տիրապետում եք լիարժեք տեղեկությունների ընտրված հիմնախնդրի մասին: Ներկայացրեք ձեր անցկացրած հետազոտման արդյունքները դասարանին: Դատեք, թե ով է պատասխանատու տվյալ հիմնախնդրի կարգավորման համար: Ով կարող է դրական/բացասական ազդեցություն ունենալ ընտրված հիմնախնդրի կարգավորման համար: Աշխատեք խմբերում, կազմեք հիմնախնդրի վճռման լավագույն ուղիներ և դասարանական բանավեճի միջոցով ընտրեք դրանցից լավագույնը: Հիմնախնդրի վճռման լավագույն ուղին ընտրելուց հետո սկսեք պլանավորել, թե ինչպես պետք է վճռեք տվյալ հիմնախնդիրը:

ԹԵՄԱ 4

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒՑ

ԹԵՄԱ 4

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒՑ

ԴԱՍ 5

«Ազատությունն ամենևին էլ չի նշանակում սեփական կամքով ապրել, ընդհակառակը՝ ազատ մարդուց ավելի շատ զսպվածություն է պահանջվում, քան ստրուկից: Ստրուկ լինել բոլորովին չեմ ուզում»:

Օթար Ճիլաձե

Կյանքը, ազատությունը, երջանկության ձգտումը այն բնական իրավունքներն են, որ ի ծնե շնորհվում են մարդուն: Մարդիկ հենց այս և այլ իրավունքների պաշտպանության նպատակով են ստեղծում իշխանությունը և, եթե վերջինս չի պաշտպանում կամ չի կարող պաշտպանել քաղաքացիների իրավունքները, մարդիկ կարող են փոխել կամ չեղյալ համարել առկա կառավարումը և ընտրել նոր իշխանություն:

Որպեսզի կարողանանք պաշտպանել մեր իրավունքները, պետք է թափանցենք այս իրավունքների էության մեջ: Քննարկենք կարևորագույն բնածին իրավունքներից մեկը, որը պայմանավորում է քաղաքացու ակտիվ ընդգրկվածությունը հասարակական գործունեության մեջ: Դա ազատությունն է: Իմերեթիի եպիսկոպոսի՝ Գաբրիելի կարծիքով ազատությունը «մարդու առաջին պարգևն է»: Ազատությունն այն է, որ «ուրիշին չանես այն, ինչ չես կամենա ինքդ քեզ, և քո իրավունքն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի իրավունքը»:

Մարդու վարքը կարող է լինել կամ չլինել ազատ: Մարդն ազատ է, երբ գործում է սեփական կամքով՝ կամավոր, իսկ ազատ չէ, երբ գործում է սեփական կամքին հակառակ, ուրիշի թելադրանքով:

Մարդն ապրում է միջավայրում, որը պարունակում է բնական և հասարակական գործոնների միասնականություն: Բնությունն իր երևույթներով, պետությունն իր օրենքներով, հասարակությունն իր ավանդույթներով, արժեքներով և բարոյական նորմերով ազդում են նրանց վրա, ճնշում: Միջավայրը հակադրվում է մարդուն՝ որպես արտաքին, օտար ուժ, որը հարկադրում է նրան գործել համապատասխանաբար: Սակայն մարդը կարող է դիմակայել այս ճնշմանը և իրականացնել դրան հակառակ գործողություն կամ գործել՝ միջավայրի գործոններից անկախ:

Մարդը չպետք է դառնա ցանկության ստրուկ, կամ ազատությունը չպետք է վերածվի կամայականության:

Ինչպես տեսնում եք, ազատությունն այնպիսի վիճակ է, երբ անհատին ոչ ոք չի ստիպում անել այս կամ այն գործը: Չնայած, պետք է հիշենք, որ մարդուն երբեք չի տրվում բացարձակ ազատություն: Նա իրավունք չունի անել խելքին փչած ամեն ինչ: Մարդու ազատությունը սահմանափակում են տարբեր օրենքներ, սակայն գլխավոր գրախոսը պատասխանատվությունն է: Պատասխանատվությունը ազատության պարտադիր պայմանն է: Այնտեղ, որտեղ չկա ազատություն, չկա նաև պատասխանատվություն: Ամեն մարդ պատասխանատու է իր գործողությունների համար. քաղաքական գործիչը քաղաքական պատասխանատվություն ունի, հանցագործությունը կարգավորվում է իրավաբանական պատասխանատվությամբ, բարոյական պատասխանատվության դատողը սեփական խիղճն է և համամարդկային և ժողովրդավարական արժեքները:

Անհատի իրավունքները և ազատությունները մարդկային բնությունից են բխում, անհատը դրանք նրա համար ունի, որ մարդ է: Իսկ պարտականություններ անհատն ունի պետության նկատմամբ: Դրանց չկատարման համար պետությունը կարող է պատժել քաղաքացուն:

Այսպիսով, պետական իշխանությունը գոյություն ունի նրա համար, որ ծառայի ժողովրդին և ոչ թե ընդհակառակը՝ ժողովուրդը ծառայի իշխանությանը: Սա է ժողովրդավարության հիմնական հենակետային սկզբունքներից մեկը: Այլ խոսքերով ասած՝ ժողովրդավարական երկրում ժողովուրդը երկրի քաղաքացիների (և ոչ թե սուբյեկտների) միասնականություն է: Այսպիսով, պետությունը պաշտպանում է իր քաղաքացիների իրավունքները, իսկ քաղաքացիներն, իրենց հերթին, կատարում են իրենց պարտականությունները, որ ունեն իրենց, ընտանիքի, հասարակության, պետության նկատմամբ: Ժողովրդավարական պետությունում քաղաքացիներն օգտվում են իրենց երկրի հասարակական կյանքին մասնակցելու իրավունքից և ազատությունից:

Հասարակական կյանքում ակտիվ ընդգրկվածության մեջ հաճախ միայն քաղաքական կյանքի մեջ ընդգրկվածությունն է ենթադրվում: Թեպետ, իրականում քաղաքացիական մասնակցությունը ժողովրդավարական հասարակության մեջ անհամեմատ ավելի լայն հասկացություն է, քան ընտրական գործընթացներին մասնակցությունը: Մունիցիպալ մակարդակով քաղաքացիները կարող են ստեղծել հասարակական խմբեր և մասնակցել տեղական ինքնակառավարման գործունեության վարմանը: Քաղաքացիները պետական մակարդակով կարող են համախմբվել տարբեր միավորումների, կամավորական կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների շուրջ, որպեսզի իրենց լուման ներդնեն ժողովրդավարական զարգացման գործի մեջ:

Կրթության հարցերով Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար, Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Դիանա Ռավիչը գրում է. «Ժողովրդավարությունը գործընթաց է, միասին ապրելու և աշխատելու գործընթաց: Այն պահանջում է փոխհամագործակցություն, փոխզիջում և հանդուրժողականություն բոլոր քաղաքացիների կողմից: Սա ծանր աշխատանք է: Ազատությունը նշանակում է պատասխանատվություն, այլ ոչ թե՝ ազատություն պատասխանատվությունից»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Մ.թ.ա. 431 թվականին Աթենքի և Սպարտայի քաղաք-պետությունների միջև պատերազմ բորբոքվեց: Այս շրջանում Աթենքի արխոնտը հունա-պարսկական պատերազմների հերոսներից մեկը՝ Պերիկլեսն էր: Մարտի դաշտում ընկած աթենացի զինվորների հուղարկավորման ժամանակ նա հրաժեշտի հանդիսավոր խոսք ասաց, որում ուշադրությունը կենտրոնացրեց նաև Աթենական պետության և հասարակության գաղափարների և կենսակերպի վրա:



- Ուշադիր կարդացեք տեքստը:
- Առանձին-առանձին դուրս գրեք Աթենքի պետական կառավարմանը բնորոշ նշանները, հասարակությունում առկա արժեքների և Աթենքի քաղաքացիների կենսակերպը ցույց տվող բառերը:

ԲԱՌԱՐԱՆ

ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - (հուն. Polis) ինքնուրույն, ինքնավար միավորում: Հին Հունաստանում քաղաք-պետությունները մշակութային առանձին կառավարման միավորներ էին: Նրանք ընդհանուր լեզու, կրոնական պատկերացումներ և աշխարհայացք ունեին, թեպետ օրենսդրությունը և քաղաքի կառավարումը ներկայացված էին ըստ ինքնավար պետության սկզբունքի: Քաղաք-պետությունը հույները պոլիս էին անվանում, հենց այստեղից է առաջացել պոլիտիկա՝ քաղաքականություն տերմինը:

... Մեր պետական համակարգի համար ոչ մի օտար գաղափար չենք սեփականացրել: Ընդհակառակը, մենք ինքներս ուրիշների համար օրինակ, և ոչ թե ընդօրինակող ենք հանդիսանում: Եվ քանի որ մեր քաղաքը կառավարում են ոչ թե մի քանի մարդիկ, այլ՝ ժողովրդի մեծամասնությունը, հետևաբար մեր պետական կարգը ժողովրդի կառավարում է կոչվում: Մասնավոր գործերում բոլորն օգտվում են միևնույն իրավունքներից և գործում օրենքների համաձայն: Ինչ վերաբերում է պետական գործունեությանը, պատվավոր պետությունը մարդուն պաշտոնում առաջ է քաշում ըստ արժանիքի, նրան, ով աչքի է ընկել ոչ թե որևէ կոչման պատկանելու ուժով, այլ՝ բարի անունով: Աղքատությունը չի խանգարում պատվավոր պաշտոններ զբաղեցնելուն ... Մենք հասարակական գործերում չենք խախտում օրենքները,

ենթարկվում ենք իշխանությանը և օրենքներին, առանձնապես՝ ճնշվածներին պաշտպանելու համար սահմանվածներին …Մենք ապրում ենք ազատ: … Հարստությունը մեզ համար ոչ թե սին փառքի նվաճման միջոց է, այլ՝ նոր նվաճումների հնարավորություն: Չենք համարում, որ աղքատության ճանաչումն ամոթ է, սակայն իսկական ետընթաց է, երբ ոչ մի ջանք չես թափում այն հաղթահարելու համար: Մեր քաղաքացիներն ազնվաբար կատարում են ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր պարտականությունները: Ուրիշ պետություններից նրանով ենք տարբերվում, որ մարդուն, որն իրեն հեռու է պահում հասարակական գործունեությունից, համարում ենք ոչ թե «հանգիստ», այլ անօգուտ քաղաքացի: Քաղաքականության բոլոր հարցերը մեկ-մեկ և ուշադիր քննարկում ենք և վիճում դրանց շուրջ, քանի որ հավատում ենք … որ ցանկացած նախաձեռնություն դատապարտված է անհաջողության, եթե սկսվել է առանց ընդհանուր դատողության: Մեր տարբերակիչ նշանն այն է, որ միաժամանակ անվախ (համարձակ) ենք մեր արարքներում և չափից ավելի ենք մտածում մինչև դրանք սկսելը … Մի խոսքով, ես ապացուցում եմ, որ մեր քաղաքը ողջ Հելլադայի դպրոցն է և համարում եմ, որ մեզնից յուրաքանչյուրն ինքնըստինքյան կարող է հեշտ և գեղեցիկ դրսևորել իր անձը բոլորովին տարբեր կենսական պայմաններում:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ.

- Ի՞նչ է պահանջում Աթենքում հասարակությունը քաղաքացուց, և ինչո՞վ է ապահովում պետությունն իր քաղաքացիներին:
- Ըստ ձեզ, Պերիկլեսն ինչո՞ւ կոչեց հասարակական գործունեությունից իրեն հեռու պահող մարդուն ոչ թե «հանգիստ», այլ անօգուտ մարդ:
- Կարո՞ղ եք ձեր ծանոթներից անվանել այն մարդկանց, ովքեր Պերիկլեսի կարծիքով օգտակար մարդիկ կարող են լինել և ինչո՞ւ: Տեքստը կարդալուց հետո ձեռք բերված տեղեկությունը գրեք ստորև տրված աղյուսակում:

ԱԹԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ	ԱԹԵՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

«Անպիտան է այն մարդը, որ կենդանի ժամանակ հանգուցյալի է նման, ապրում է այս երկրում և չի հոգում նրա մասին»:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ.

- Ի՞նչ կա ընդհանուր Պերիկլեսի ճառի և Նիկոլոզ Բարաթաշվիլիի այս տողի միջև:
- Հիշե՛ք վրաց հասարակական գործիչների, որոնք նշանակալի լումա են ներդրել երկրի հասարակական զարգացման մեջ:
- Մեկ անգամ ևս ձևակերպեք, թե ինչ է անհրաժեշտ հասարակությանը քաղաքացուց և՝ ընդհակառակը: Ի՞նչ է անհրաժեշտ հասարակությանը ձեզանից, և ձեզ՝ հասարակությունից:
- Ըստ ձեզ, Պերիկլեսի ժամանակ Հունաստանում կա՞ր քաղաքացու ինքնահիրացման համար հարմար միջավայր: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
- Այսօրվա Վրաստանում արդյոք կա՞ այսպիսի միջավայր: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Օթար Ճիլաձեն XX դարի ականավոր վրաց բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, էսսեիստ, սցենարիստ, «իր ժամանակվա անկեղծ մատենագիրն» է, նա իր կյանքի էությունը հետևյալ բառերով է արտահայտում.

«Որքան էլ պաթոսով հնչի, իմ կյանքի «հավատամքը» հայրենիքն է և ճշմարտությունը: Այլ գաղափարների հետևելը առայժմս եթե ակամա հանցանք չէ, բացահայտ ճոխություն է մեզ համար: Ճոխությունն, ինչ խոսք, լավ բան է, բայց այն պետք է վաստակել, այն էլ էլի ու էլի հայրենիքին ու ճշմարտությանը ծառայելով»:

Կարդացե՛ք հատվածը Օթար Ճիլաձեի խոսքից, որը նա արտասանել է 1989 թվականի ապրիլի 9-ի ողբերգությունից հետո:

Դատապարտում եմ դաժանությունը

(Ռադիոելույթ 1989 թվականի ապրիլի 11-ին)

«Իմ ողջ էությամբ դատապարտում եմ այն անմարդկային դաժանությունը, հաշվեհարդարի այն բարբարոսական մեթոդը, զոհի նկատմամբ այն լկտի անկարեկիրությունը, ինչի վկաներ, ի դժբախտություն մեզ, դարձանք մենք ապրիլի 9-ի գիշերը: Այս գիշերը երևի որպես «նոր Բարթուղիմեոսյան գիշեր» մտավ համաշխարհային պատմության մեջ, իսկ մեր գիտակցության մեջ այն կմնա՝ որպես հավերժական խավար, որը երբեք չի լուսանա, ինչպես ուզում է վաղվանից ընթանան մեր կյանքի ճանապարհները: Մեզ ոչ թե պատժեցին՝ որպես քաղաքական հանցագործների, այլ մթության մեջ, աճապարանքով, առանց դատապարտման կոտորեցին՝ ասես սողունների: Իսկ մեր ամենամեծ հանցանքը ազատության ձգտումն էր, ուրիշ ոչինչ: Իսկ ազատության ձգտումն ընդհանրապես մարդու գլխավոր հատկությունն է, և դրանում

ոչինչ չկա ոչ անհասկանալի, ոչ էլ անսպասելի, ոչ չափազանցված և, որ ամենակարևորն է, ոչ էլ ուրիշներից տարբերվող:Ընդհակառակը, եթե նմանեցնում է, ապա հենց այս ազնվագույն հատկությունը և պահանջմունքն է մեզ նմանեցնում այն երջանիկ ժողովուրդներին, որ ուրիշներից շուտ են անցել ինքնորոշման, ինքնահաստատման, ինքնաճանաչման ուղին: Այս ուղին վաղ թե ուշ բոլոր ժողովուրդները պետք է անցնեն և այդ թվում, իհարկե, նաև մենք: Սակայն բանն այն է, թե ով ինչպես կանցնի այս ճանապարհը կամ մինչև վերջ կանցնի, թե՞ ճանապարհի կեսին կկանգնի, կշփոթվի, կսխալվի ... Մթից միանգամից լույսին դուրս գալը վտանգավոր է. անսովոր դարձած լույսն այնպես կարող է կուրացնել մեզ, որ նույնիսկ հասարակ խոչընդոտը կարող է ճակատագրական լինել մեզ համար»:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ.

- Ինչո՞ւ պետք է հիշենք Ապրիլի 9-ի հերոսներին:
- Ի՞նչ էր նրանց բողոքի նպատակը:
- Մարդու ո՞ր իրավունքն էին պաշտպանում նրանք:
- «… Մթից միանգամից լույսին դուրս գալը վտանգավոր է. անսովոր դարձած լույսն այնպես կարող է կուրացնել մեզ, որ նույնիսկ հասարակ խոչընդոտը կարող է ճակատագրական լինել մեզ համար»: Ինչ եք կարծում, ի՞նչ նկատի ունի տեքստի հեղինակն այս բառերով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4

«Գործողություն առանց բռնության» - այս արտահայտությունը ենթադրում է բողոքի առանձնահատուկ խաղաղ ձև անարդարության դեմ: Այստեղ բերված անհատները տարբեր ազգերի զավակներ են, ապրել են տարբեր ժամանակներում, սակայն նրանց միավորել է առանց բռնության պայքարն ազատության համար: Հենց այդ պատճառով աշխարհը ճանաչեց նրանց անձնվիրությունը, իսկ իրենց երկրներում ժողովուրդը նրանց ազգային հերոսներ ճանաչեց: Ուշադիր կարդացեք տրված տեղեկությունները իրավունքների անվանի պաշտպանների մասին:

«Իմ առաքելությունը միայն Հնդկաստանի ազատությամբ չի սահմանափակվում: Այն ենթադրում է այս հասկացության վերլուծումը, մարդկանց բարեկամությունը և փոխըմբռնումը»:

Մահաթմա Գանդի

ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ

Մոհանդաս Կարամ Չանդ Գանդին, նույն Մահաթմա Գանդին (նրան «Մահաթմա» է կոչել հնդիկ գրող Թագորը, ինչը նշանակում է «մեծ հոգի»), Հնդկաստանի ազգային-ազատագրական շարժման աչքի ընկնող առաջնորդներից մեկն էր: Նա կրթությամբ իրավաբան էր: Մեծ Բրիտանիայից Հնդկաստանն ազատագրելու նպատակով Մահաթմա Գանդին կոչ արեց ժողովրդին առանց բռնության անհնազանդության կամ խաղաղ գործադուլի: Տեղական արտադրության վերածննդի նպատակով, նա բոյկոտ հայտարարեց բրիտանական արտադրանքին: Ինքն էլ հրաժարվեց եվրոպական հագուստից: Հագավ հնդկական տնայնագործական գործվածքի հագուստ և գեղջկական մաշիկներ: Գանդին կոչ արեց հնդիկ կանանց ամեն օր տնային պայմաններում պատրաստել ավանդական հնդկական «խադի» կոչվող գործվածքը: Այս վճիռը կխանգարեր անգլիական մանածագործական արտադրանքի իրացմանը Հնդկաստանում և կնպաստեր Հնդկաստանի տնտեսական անկախությանը: Հնդկաստանի անկախության Գանդիի պլանը երկու մասից էր բաղկացած.

1. Հնդկաստանը չպետք է ստանար անգլիական արտադրանք:
2. Հնդկաստանը պետք է անհնազանդություն հայտարարեր անգլիական օրենքների դեմ:

Մահաթմա Գանդին իր սկզբունքներով, հավատով, ոչ բռնի գործողություններով ներգործեց 200 000 մարդու գիտակցության վրա և համոզեց նրանց միավորվել և միասին գործել բռնության դեմ: Հնդիկ ժողովրդի և Գանդիի անխոնջ պայքարը բռնության դեմ (նրանք հրաժարվում էին անգլիացիների հետ համագործակցելուց, կազմակերպում էին բողոքի քայլերթեր, չէին վախենում կալանավորումից և այլն) անարդյունք չմնաց. 1947 թվականին Հնդկաստանը անկախ պետություն դարձավ:

ՎԱՑԼԱՎ ՀԱՎԵԼ «ՉԵԽԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ»

Վացլավ Հավելը չեխ դրամատուրգ է, էսսեագիր, այլախոհ և քաղաքական գործիչ, ծնվել է 1936 թվականին: Նա Չեխոսլովակիայի վերջին և Չեխիայի առաջին նախագահն էր:

Նրա առաջին տասներեքամյա կառավարման շրջանում երկիրն արմատական փոփոխությունների է ենթարկվել, այդ թվում երկրի ժողովրդավարական ուղի ընտրելն էր, Չեխոսլովակիայից անջատվելը, Եվրամիության անդամության վերաբերյալ երկխոսություն սկսելը և այլն: Երբ Սլովակիան էլ (սլովակները և չեխերը մեկ երկրում՝ Չեխոսլովակիայում էին ապրում) անկախություն հայտարարեց, Հավելն ասաց, որ ցավալի է, որ սլովակներն իրենց հետ [չեխերի հետ] այլևս չեն ուզում ապրել, սակայն, քանի որ այս կամքը սլովակ ժողովուրդը հանրաքվեով է արտահայտել, չեխերը նրանց [սլովակների] կամքին պետք է ենթարկվեն: Այդ պատճառով Հավելին շատերը քննադատեցին, մեղադրում էին Չեխոսլովակիայի բաժանվելու համար, սակայն անցավ ժամանակ և խոստովանեցին, որ Հավելը ճիշտ վարվեց, նրա ջանքերով երկիրը խուսափեց արյունահեղ պատերազմից: Այս ամենը տեղի է ունեցել 1989 թվականին: Վացլավ Հավելի ղեկավարությամբ, չեխերն Արևելյան Եվրոպայում առաջինները «թավշյա հեղափոխության» միջոցով պարտության մատնեցին խորհրդային ռեժիմը:

Չեխոսլովակիայի նման «թավշյա հեղափոխությունների» ալիքն անցավ Արևելյան Եվրոպայի այլ երկրների վրայով ևս (Լեհաստան, Հունգարիա): Նույնպիսի «առանց արյուն» մեթոդով ավարտվեցին նաև որոշ ետխորհրդային ռեժիմներ (2003 թվական՝ «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում, 2004 թվական՝ «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում, 2005 թվական՝ «Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում):

«Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում

«Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում

«Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում

«Պրագայի գարունը հաճախ հասկանում են՝ որպես բախում իշխանության երկու խմբավորումների միջև, որոնցից մեկը ցանկանում էր պահպանել համակարգն առկա ձևով, իսկ մյուսը ցանկանում էր այն վերափոխել: Կոմունիստ քաղաքական գործիչները, որոնք աշխատեցին համակարգը փոխել, փոփոխությունների պլանը փոխեցին ոչ թե նրա համար, որ հանկարծ պարզվեց նրանց գիտակցությունը, այլ այն պատճառով, որ հասարակական կարծիքի ազդեցության ներքո էին գտնվում»:

Վացլավ Հավել

ԲԱՌԱՐԱՆ

ԿՈՄՈՒՆԻԶՄ – հասարակական-քաղաքական գաղափարախոսություն, որի համաձայն, ինչպես իշխանությունը, այնպես էլ սեփականությունը պետք է լինեն հասարակության ձեռքում: Հասարակական բարեկեցությունը համընդհանուր մատչելի պետք է լինի: Մարքսիստական տեսության համաձայն, կոմունիզմը՝ անդասակարգ հասարակությունը, հասարակական զարգացման վերջնական կետն է: Հասարակության յուրաքանչյուր անդամ աշխատում է աշխատելու կարողության և հնարավորությունների շրջանակներում, սակայն ստանում է ըստ պահանջմունքների:

«Անհնազանդությունը չարիքի նկատմամբ նույնպիսի բարոյական պարտավորություն է, ինչպիսին բարիքին նպաստելն է»:

Մարտին Լյութեր Քինգ

ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐ ՔԻՆԳ

Ծնվել է 1929 թ. հունվարի 15-ին, Ատլանտայում (Ջորջիայի նահանգ, ԱՄՆ), սևամորթերի ընտանիքում: Չնայած նրան, որ ստրկությունը ԱՄՆ-ում վաղուց վերացված էր, սևամորթ բնակչությունը ծայրահեղ չքավորության մեջ էր և խտրականության էր ենթարկվում: Քինգը ռասիզմի առանց բռնության դիմադրության առաջնորդն էր: Նա կամենում էր հավասարության հասնել խաղաղ ճանապարհով: Նրա առանց բռնության գործողությունների՝ խաղաղ երթերի, տնտեսական շրջափակումների, զանգվածային ելույթների հետևանքով ԱՄՆ-ի կոնգրեսն ընդունեց Իրավունքների մասին ակտը:

Մարտին Լյութեր Քինգը հավատում էր, որ բռնությանը և ատելությանը պարտության կմատնեին ներողամտությունը և սերը: Հենց այս սկզբունքի վրա էր հիմվում նրա քաղաքական պայքարի գործողությունների պլանը:

1. Ոչ մի մարդ և մարդկանց ոչ մի խումբ չպետք է բռնություն գործադրի արդարության վերականգնման համար, քանի որ գոյություն ունի երկրորդ՝ այլընտրանքային ուղին:

2. Ի՞նչ է գործողությունն առանց բռնության: Գլխավոր բնութագրիչը՝ երբեք չստորացնես հակառակորդիդ, չփորձես ջախջախել նրան, նրա սերը, ըմբռնումը և հարգանքը վաստակիր:

3. Այս քաղաքականության նպատակն է՝ գործողությունն ուղղել ոչ թե մարդկանց, այլ չարիքի և անարդարության դեմ, որի զոհերն են այս մարդիկ:

4. Այս քաղաքականության գլխավոր սկզբունքն է՝ կիսիր ուրիշի դժբախտությունը, բռնությանը բռնությամբ չպատասխանես և չմտածես վրեժխնդրության մասին:

5. Առանց բռնության գործողությունը բացառում է ոչ միայն արտաքին և ֆիզիկական բռնությունը, այլև ներքին ճնշումը մարդու հոգու և բանականության վրա:

6. Այս քաղաքականությունը հիմվում է այն հավատի վրա, որ համաշխարհային կարգուկանոնը հիմվում է արդարացիության վրա: Իսկ սա լուսավոր ապագայի հանդեպ հավատ է ներշնչում:

20-րդ դարի 60-ական թվականներին ռասայական հավասարության համար պայքարը հասավ գագաթնակետին:

1963 թվականին Վաշինգտոնում 300 000 մարդ խաղաղ երթ կազմակերպեց: Հանրահավաքին ամբողջ օրը լսվում էին երգեր, ելույթներ: Հանրահավաքի կարևորագույն պահը Մարտին Լյութեր Քինգի ելույթն էր:

ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

Նելսոն Մանդելան ծնվել է 1918 թվականին: Նա իրավաբանական կրթություն է ստացել: 1952 թվականից դարձել է «Աֆրիկայի ազգային կոնգրեսի» ակտիվիստ: Ամբողջ երկրում վարում էր հակաապարտեիդյան շարժում, պաշտպանում սևամորթերի իրավունքները: Նա, իր յոթ համախոհների հետ, 27 տարի բանտում անցկացրեց: Կալանատունն արտաքին աշխարհից մեկուսացված կղզու վրա էր գտնվում, որտեղ նա թոքախտով հիվանդացավ:

1990 թվականին Հարավային Աֆրիկայի Ազգային կոնգրեսի առաջնորդին ազատեցին բանտից, 1994 թվականին նա նախագահ դարձավ: Մանդելայի կառավարության գերակայություններն էին առողջությունը, կրթությունը, տնտեսական կայունությունը: Նա անընդհատ իր ժողովրդին՝ սևամորթ մեծամասնությանը և սպիտակամորթ աֆրիկացիներին, սիրո և փոխվստահության կոչ էր անում:

Մանդելայի ռասայական խտրականության հաղթահարման լավ օրինակ է սևամորթ աֆրիկացիների կողմից իրենց համար նախկինում ատելի սպիտակամորթ համաքաղաքացի ռեգբիստների թիմին երկրպագելը: 1995 թվականին աշխարհի գավաթին, որպես փոխադարձ սիրո և հավասարության նշան, Մանդելան «Սֆինքսբոքսների» (սպիտակամորթ ռեգբիստների թիմի անվանումը) մարզաշապիկ էր հագել և այսպես փոխանցել թիմի սպիտակամորթ ավագին պարգևը:

Նելսոն Մանդելայի հեղինակությունը մեծ դեր կատարեց Հարավային Աֆրիկայի հասարակական կյանքում: Նրան այսօր էլ «ընտանիքի ավագ» կամ «մադիբա» են կոչում:

2009 թվականի նոյեմբերին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը հուլիսի 18-ը հայտարարեց «Մանդելայի օր»:

«Ոչ ոք չի ծնվում այլ մաշկի գույնի, այլ ծագման մարդկանց նկատմամբ բնածին ատելության զգացումով: Այս ատելությունը մարդիկ ձեռք են բերում, և քանի որ այս ատելությունը ձեռքբերովի է, ուրեմն սիրել սովորելն էլ հնարավոր պետք է լինի»:

Նելսոն Մանդելա

ԲԱՌԱՐԱՆ

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն: Ստեղծվել է 1945 թվականի հունիսի 26-ին:



«Եթե իրար հետ ընդհանուր լեզու չկարողանանք գտնել, գուցե գա անթափանց խավարի ժամանակը, որտեղ մենք, կուրացած, անտեղի կսկսենք միմյանց որոնել, սակայն չենք գտնի»:

Մերաբ Կոստավա

ՄԵՐԱԲ ԿՈՍՏԱՎԱ

Վրաստանի ազատության, անկախության, կոմունիստական ռեժիմի դեմ առանց բռնության բողոքի ճանապարհով պայքարող, ազգային շարժման առաջնորդ Մերաբ Կոստավան ծնվել է 1939 թվականի մայիսի 26-ին, Թբիլիսի քաղաքում:

Մերաբ Կոստավան իր համախոհների հետ առաջին հայրենասիրական անլեգալ «Գորգասալի» կազմակերպությունն է հիմնադրել: Կազմակերպության անդամները խաղաղ բողոքի ելույթներով արշավում էին խորհրդային ռեժիմի դեմ: Այդ պատճառով տասներորդ դասարանի աշակերտին ձերբակալել են, սակայն որպես անչափահաս, 6 ամիս հետո ազատել են պայմանական պատժով:

1972 թվականին Մերաբ Կոստավան Զվիադ Գամսախուրդիայի հետ ձևավորում է Վրաստանում մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնող խումբ: Չեն դադարում ճնշամիջոցները նրա դեմ: Նա 10 տարի կալանավայրում է անցկացրել: Նրա վերադարձին հետևում է ազգային-ազատագրական շարժման ակտիվացում: Երկրի անկախությունն անդառնալի գործընթաց էր դարձել:

Մերաբ Կոստավան 1987-1989 թվականներին անցկացված բողոքի բոլոր գործողությունների, գործադուլների, հացադուլների, հանրահավաքների և ցույցերի կազմակերպիչն էր: Առանց բռնության բողոքի բոլոր ձևերով նա պայքարում էր խաղաղության, վրաց ժողովրդի, հասարակության միասնականացման համար:

Մերաբ Կոստավան 1989 թվականի հոկտեմբերի 13-ին Բորիթի գյուղի մոտ է զոհվել:

1993 թվականի սեպտեմբերին Զուգդիդի քաղաքում Վրաստանի Հանրապետության գերագույն խորհրդի երրորդ գումարման երկրորդ նստաշրջանը Մերաբ Կոստավային շնորհեց ազգային հերոսի կոչում:

Մերաբ Կոստավայի գործունեության հիմնական սկզբունքն էր արդարացիությունը, պայքարի խաղաղ մեթոդը, արդյունքի նվաճման համար հասարակության միավորումը, անհատի ներքին ազատությունը:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ.

- Ի՞նչն է միավորում մարդու իրավունքների ներկայացված պաշտպաններին:
- Առանձնացրեք նրանց գործունեության նշանակալի փուլերը:
- Մարդկանց իրավունքների պաշտպաններից էլի ո՞ւմ կհիշեիք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5

Եկե՛ք, մեր դպրոցից սկսենք.

- Չնակերպեք, թե ինչ է անհրաժեշտ աշակերտին (ուսուցչին, դպրոցի ցանկացած այլ աշխատակցի) դպրոցից, և ինչ է անհրաժեշտ դպրոցին աշակերտից (ուսուցչից, դպրոցի ցանկացած այլ աշխատակցից):
- Համառոտ վերլուծեք, թե ինչ գործառույթներ ունեն դպրոցը կամ տեղական ինքնակառավարումը, հիմնախնդրի վճռման համար ինչու պետք է դիմենք նրանց, ինչու է այս ուղին ժողովրդավարական:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6

Առակ՝ ինչ վերաբերմունք ունենք.

«Երկու հույներ ուղևորվեցին ճանապարհորդության, որպեսզի իմանան, թե ինչպես է ապրում ժողովուրդը: Մի փոքրիկ քաղաքում նրանք տեսան մարդկանց, որոնք բավական տարօրինակ էին վարվում: Նրանք անխտիր հսկայական քարաբեկորներ էին տանում ինչ-որ տեղ: Ինչպես զգացվում էր առաջին հայացքից, շատ էին դժվարանում, նրանց կոշտուկավոր ձեռքերից արյուն էր հոսում: Տանջված երեսներից քրտինքի հեղեղ էր հոսում: Իմաստունները հետաքրքրվեցին, թե ինչին էր ծառայում նրանց գործունեությունը:

– Ի՞նչ ես անում,- հարցրին նրանցից մեկին:

– Քարեր եմ տեղափոխում, - եղավ պատասխանը:

– Իսկ դու ի՞նչ ես անում, - հարցրին մյուսին:

– Երեխաներիս համար մի կտոր հացի փող եմ վաստակում:

– Դու ի՞նչ ես անում:

– Աստծո տաճար եմ կառուցում:

Այն ժամանակ թափանցեցին իմաստուն մարդիկ մեկ կենսական ճշմարտության մեջ.

«Գլխավորը ոչ թե այն է, թե ինչ ես անում, այլ այն, թե ինչպես ես մոտենում այդ գործին»:

Միևնույն գործունեությունը կարող է մի մարդուն տանջանք և ցավ պատճառել, իսկ մյուսին՝ երջանկություն պարգևել: Մենք պետք է կարողանանք ամենից վատ իրավիճակում նույնիսկ ինչ-որ լավ բան հայտնաբերել, քանի որ այն այդտեղ անպայման կա: Ուղղակի լավ պետք է նայենք մեր շուրջբոլորը, կարողանանք սովորականի մեջ տեսնել անսովորը, միայն այս կերպ կկարողանանք փոխել ողջ մեր կյանքը:

Կարդացեք առակը և պատասխանեք հարցերին.

- Հիշեք մի դեպք, երբ մարդիկ, որոնք միևնույն գործն են անում, այդ գործի նկատմամբ տարբեր վերաբերմունք ունեն: Փորձեք բացատրել:
- Առակի խրատն աշխատեք կապել ակտիվ քաղաքացու հատկանիշների՝ պատասխանատվության, ինքնուրույնության, նախաձեռնության, մասնակցելու ցանկության, հոգատարության, սիրով և բարիքով գործ անելու հետ և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - V ԱՍՏԻՃԱՆ. ՆԱԽԱԳԻԾ ԳՐԵԼ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Դուք արդեն բավականին ընդարձակ տեղեկություն եք կուտակել նախագծային առաջարկի համար ընտրված հիմախնդրի մասին: Նախագծի վրա աշխատանքի այս փուլում պետք է սկսեք կուտակած գիտելիքի և պորտֆոլիոյի օգտագործմամբ նախագիծ գրել:

Կրկին խմբերի բաժանվեք և յուրաքանչյուր խումբ թող աշխատի պորտֆոլիոյի մեկ մասի վրա: Այս մասերը պետք է լինեն ձեր կատարած աշխատանքն արտացոլող և պետք է ներկայացնեն նախագծի զարգացման այն բաղադրամասը, որի վրա աշխատել է ձեր խումբը:

Պորտֆոլիոյին կցեք ձեր հայթայթած նյութը, նաև՝ լուսանկարներ, գրառումներ և այլ տիպի աշխատանքներ:

Նկատի ունեցեք, որ հետաքրքրված անձը, պորտֆոլիոյին ծանոթանալուց հետո, պետք է ամբողջությամբ տիրապետի ընտրված հիմախնդրի և նրա վճռման ուղիների մասին տեղեկություններին: Պորտֆոլիոն կարող է ընդգրկել ինչպես էլեկտրոնային ռեսուրս, այնպես էլ տպագիր նյութ և աշակերտի ձեռագիր աշխատանք:

ՊՈՐՏՖՈԼԻՈՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Որպեսզի ստուգեք, լա՞վ է կազմակերպված պորտֆոլիոն, միմյանց դիմեք հետևյալ հարցերով.

- Ձեր պորտֆոլիոն պարունակո՞ւմ է մանրամասն տեղեկություններ հիմախնդրի և դրա հետ կապված հարցերի վերաբերյալ:
- Ձեր պորտֆոլիոյում չկա՞ն ավելորդ տեղեկություններ:
- Ձեր պորտֆոլիոն հասկանալի՞ է գրված: Քերականորեն և ուղղագրական տեսակետից գրագե՞տ է:
- Փաստարկները և հարցերը հստա՞կ են ձևակերպված:
- Բերված տեղեկությունները ճի՞շտ են:
- Այս տեղեկությունները պատասխանո՞ւմ են գլխավոր հարցերին:
- Այս տեղեկությունը ընթերցողին կօգնի՞ գիտակցել հիմախնդրի էությունը:

ԹԵՄԱ 5

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԹԵՄԱ 5

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԴԱՍ 6

Դասագրքի նախորդ գլուխներում դուք արդեն ծանոթացել եք, թե ինչ է նշանակում ժողովրդավարական հասարակությունը, ինչ է ենթադրում ակտիվ քաղաքացիությունը, ինչ պարտավորություններ ունի ակտիվ քաղաքացին քաղաքացիական հասարակության նկատմամբ, նաև այն հիմնարար արժեքներին և սկզբունքներին, որոնց համաձայն բոլոր քաղաքացիները հավասար են միմյանց և օրենքի նկատմամբ: Դուք արդեն գիտեք, որ ժողովրդավարական հասարակությունը հենց ակտիվ քաղաքացիներն են կառուցում: Դասագրքի տվյալ գլուխն ամփոփում է ստացած գիտելիքը: Նախագծի վրա աշխատանքը ձեզ հնարավորություն տվեց ձեր ստացած գիտելիքն օգտագործել կյանքում և, աշխատելով հասարակության համար նշանակալի հիմախնդրի վրա, ձեզ զգալ ակտիվ քաղաքացի: Դուք նաև ծանոթացաք մարդու իրավունքներին և անհրաժեշտություններին և քաղաքացու ակտիվ մասնակցության նշանակությանը ժողովրդավարական գործընթացներում: Ինչպե՞ս է ձևավորվում հասարակական տեսակետից ակտիվ քաղաքացին: Դրա հիմքը նախ այն պատասխանատվության գիտակցումն է, որ ունի մեզանից յուրաքանչյուրը մեզ շրջապատողների նկատմամբ:

Քանի որ ժողովրդավարական հասարակությունում քաղաքացու պատասխանատվության աստիճանին այսպիսի հիմնարար նշանակություն է շնորհվում, այդ պատճառով առանձնապես կարևոր է, որ հենց դպրոցից գիտակցեք ձեր դերը և պատասխանատվությունն այն միջավայրում, որում գտնվում եք:

Անհրաժեշտ է գիտակցեք, որ դպրոցը այն տեղը չէ, որտեղ միայն կրթություն ենք ստանում, այլև այն տեղն է, որտեղ կրթությանը զուգահեռ, ապրում ենք, մեծանում և ձևավորվում որպես անհատներ, սովորում ենք, թե ինչպես պետք է ստանձնենք պատասխանատվություն այն միջավայրի համար, որի մասն ենք մենք, և ինչպես դարձնենք այս միջավայրն ավելի լավը, քան նա այժմ կա:

Պատասխանատվության ստանձնումը հենց այն է նշանակում, որ մենք նախատեսում ենք մեր ենթադրյալ որոշման բոլոր հնարավոր տարբերակները, նրա հետևանքները, ազդեցությունն այլ մարդկանց՝ ընտանիքի անդամների, համադասարանցիների, դպրոցի, հասարակության վրա, նախատեսում ենք, որ մենք ունենք որոշում կայացնելու իրավունք, թեպետ այս ազատությունը միևնույն ժամանակ մեզ վրա պատասխանատվություն է դնում, որ մեր կայացրած որոշումը բացասաբար չազդի ուրիշի վրա, մենք մեր իրավունքներն այնպես պետք է պաշտպանենք, որ հարգենք նաև ուրիշների իրավունքները: Հենց սա է հանդիսանում ժողովրդավարական հասարակության առավելությունը. մարդիկ պաշտպանում են ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների իրավունքները և պատասխանատվություն ստանձնում ինչպես իրենց, այնպես էլ ուրիշի և երկրի հիմախնդիրների համար:

Ընդհանրապես, պատասխանատվության մասին խոսելիս, քննարկում են պատասխանատվության մի քանի տեսակ և մակարդակ, օրինակ՝ ինքնակառավարման, տարբեր պետական կառույցների, մասնագիտական և լրատվականի միջոցների, ծնողի, ուսուցչի և այլն: Թեպետ, յուրաքանչյուր դեպքում պատասխանատվությունը հիմնվում է որոշակի հիմնարար արժեքների և իրավունքների վրա: Հիմնականում, առանձնացվում է երեք գլխավոր մակարդակ՝ իրավաբանական պատասխանատվություն, քաղաքացիական պատասխանատվություն և բարոյական պատասխանատվություն:

Իրավաբանական պատասխանատվությունն օրենսդրությամբ և տարբեր կանոնակարգող փաստաթղթերով սահմանված պատասխանատվություն է:

Քաղաքացիական պատասխանատվությունը քաղաքացու՝ իր և ուրիշների իրավունքների պաշտպանության և բարեկեցության մասին հոգ տանելու պատասխանատվությունն է:

Բարոյական պատասխանատվությունը պատասխանատվություն է, որը սահմանում են անձնական վերաբերմունքները, սոցիալական, բարոյական և էթիկական արժեքները:

Հաճախ չի հաջողվում համաձայնեցնել ստանձնած պատասխանատվությունները, օրինակ՝ բարոյական և իրավաբանական կամ բարոյական և քաղաքացիական, և այս հակասության հիման վրա մենք կարող ենք հայտվել **երկընտրանքի** առջև:

ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԿԸՆՏՐԱՆՔ - 1. (տրամ.) դատողություն կամ եզրակացություն, որը պարունակում է միմյանց փոխբացառող երկու դրույթ, որոնցից անպայման պետք է ընտրվի մեկը: 2. Այնպիսի իրավիճակ, երբ երկու անցանկալի հնարավորություններից անհրաժեշտ է ընտրել մեկը:

Դաչին և Սալոմեն լավագույն ընկերներ են: Խաղալիս Դաչիի նետած գնդակը դիպչում է պատուհանին և կոտրում ապակին: Սա տեսնում է նաև Սալոմեն: Երբ ուսուցիչը սկսում է որոնել մեղավորին,Դաչին չի կարողանում ասել, որ ինքն է կոտրել ապակին: Իսկ Սալոմեն հայտնվում է երկընտրանքի առջև՝ մատնի ընկերոջը, թե՞ ոչ:

Դատեք, թե ինչու է դժվարանում Սալոմեն որոշում կայացնել:

Դուք տեսաք, որ որոշման կայացումը հաճախ կապված է մեծ դժվարության հետ, քանի որ միշտ չէ, որ հաջողվում է իրավունքները, պատասխանատվությունները և արժեքները ներդաշնակ համապատասխանեցնել, ընդհակառակը, դրանք հակասում են միմյանց, և հենց այս հակասությունն է հանգեցնում երկընտրանքի: Դժվարություն է ստեղծում նաև այն, որ որոշումներ կայացնելիս միայն «ցանկություններով» առաջնորդվելը հակասում է բարոյական պատասխանատվության բարձրագույն կարգին: Հենց այսպիսի քննություն ու մարտահրավեր նկատի ունի Ռուսթավելիի ասածը՝ «Արա այն, ինչը չես ցանկանում, ինչ որ ցանկանում ես՝ դա ինչ անելու բան է»:

Հենց առաջին դասից դուք սկսեցիք աշխատել նախագծի վրա: Նախագծի վրա աշխատելու նպատակը ճիշտ այն բանի ուսուցումն էր, թե ինչպես պետք է ստանձնեք պատասխանատվությունը ձեր շուրջն առկա հիմնախնդիրների համար: Ժողովրդավարական հասարակությունում մարդկանց միավորումների բազմաթիվ ձևեր գոյություն ունեն: Նրանք ձգտում են ընդհանուր հասարակական բարեկեցության նվաճման: Վրաստանում շատ այսպիսի կազմակերպություններ կան: Օրինակի համար մտաբերենք Վրաստանում գործող բարեգործական ընկերությունները.

- «Առաջին քայլ» հիմնադրամ,
- Ծնողազուրկ և ծնողների խնամքից զուրկ երեխաների «Իափսանա» հիմնադրամ,
- Վրաստանի Կարիտաս,
- Կաթարզիս:

Թվարկումը կարող է շարունակվել: Բոլոր այս ոչ կառավարական կազմակերպությունները ակտիվորեն գործում են սոցիալապես անապահով մարդկանց օգնելու նպատակով:

Աշխարհում շատ կան մարդու իրավունքները պաշտպանող կազմակերպություններ, օրինակ.

- «Մարդու իրավունքների միջազգային դաշնություն» (International Federation for Human Rights) http://www.fidh.org
- «Ամնեստի ինտերնեյշենել» (Amnesty International) http://www.amnesty.org
- «Հյուման ռայթս վոչ» (Human Rights Watch) http://www.hrw.org

GEORGIA caritas

fidh
Fédération internationale des ligues des droits de l'Homme
Մարդու իրավունքների միջազգային դաշնություն

HUMAN RIGHTS WATCH

• «Ազատության տուն» (Freedom House)
http://www.freedomhouse.org

Բոլոր այս տիպի կազմակերպությունները ակտիվորեն գործում են ճշմարիտ մտքի մոբիլիզացման համար և, նաև աշխատում հասարակության մեջ բարձրացնել քաղաքացիական գիտակցությունը, որպեսզի ազդեն իշխանության մարմինների որոշումների վրա:

Այսպիսի շահագրգիռ խմբերը միջնորդի դեր են կատարում առանձին անհատների և իշխանության միջև: Նրանց գործունեության հետևանքով՝ բաց բանավեճերի, երկխոսության, փոխզիջման և **կոնսենսուսի՝ միակարծության** ճանապարհով, ժողովրդավարական հասարակությունում հնարավոր է այնպիսի որոշումներ կայացնել, որոնք կբարելավեն քաղաքացիների բարեկեցությունը:

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիներն ունեն խաղաղ հավաքների և իրենց բողոքն առանց բռնության արտահայտելու իրավունք: Ցույցերը, խնդրագրերը, երթերը, հանրահավաքները, ժողովրդական ելույթները, պիկետները, թռուցիկները և պարսավագրերը, պաստառների ցուցահանդեսը, նշանաբանները, բողոքի նամակները, դահլիճից ցուցադրաբար հեռանալը, կառավարական պարգևներից հրաժարվելը, բոյկոտումը, հացադուլը, բողոքի գործադուլը և այլն բողոքի ձևեր են, որոնք ուղղված են անարդարության դեմ: Բողոքի այսպիսի ձևերը միշտ եղել են ժողովրդավարական հասարակության անբաժան մասը:

Հասարակական ակտիվության վերոթվարկյալ բոլոր միջոցները և մեթոդները միայն իսկական ժողովրդավարական հասարակությունում կարող են ամբողջությամբ իրականացվել և տալ իրական դրական արդյունք:

Իսկական ժողովրդավարական հասարակությունում ավելին է հասարակական կյանքին մարդու տարբեր ձևերի մասնակցության շահագրգռվածությունը, քանի որ այստեղ իսկապես լսում են յուրաքանչյուր քաղաքացու ձայնը:

Ժողովրդավարական հասարակությունը ձևավորում է ակտիվ քաղաքացի և, ընդհակառակը, ակտիվ քաղաքացին ստեղծում է ժողովրդավարական հասարակություն, որը հիմված է հետևյալ արժեքների վրա.

Կյանք - ոչ ոք իրավունք չունի մարդու կյանքի իրավունքի նկատմամբ ոտնձգություն անել, բացի այն դեպքերից, երբ վտանգ է սպառնում ձեր կամ այլոց կյանքին:

Ազատությունն ընդգրկում է անձնական, քաղաքական և տնտեսական ինքնուրույնություն: Միավորում է նաև հավաքների ազատությունը, երբ մարդիկ ունեն հավատ, գաղափարներ, հայացքներ և իրավունք՝ հրապարակավ արտահայտելու իրենց կարծիքները:

• **Անհատական ինքնուրույնությունը** ենթադրում է առանց պետական վերահսկման մտածելու և վարվելու իրավունքը:

ԲԱՌԱՐԱՆ

ԿՈՆՍԵՆՍՈՒՍ - միակարծություն, բոլոր կարծիքների նախատեսմամբ՝ խմբին վերջնական համաձայնության հասցնելը:

- **Քաղաքական ինքնուրույնությունը** քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքն է:
- **Տնտեսական ինքնուրույնությունը** անձնական սեփականության առք ու վաճառքի և կոմերցիոն նպատակներով կիրառելու իրավունքն է, որը նույնպես առանց պետության միջամտության գործունեության/աշխատանքի/աշխատելու իրավունք է:

Արդարացիությունը ենթադրում է, որ բոլոր մարդիկ հավասարապես պետք է բաժանեն և՛ հասարակական օգուտը, և՛ պարտավորությունները: Ոչ ոք չունի անհատական կամ խմբային առավելության իրավունք:

Հավասարությունը ենթադրում է, որ բոլոր մարդիկ ունեն քաղաքական, սոցիալական և տնտեսական հավասարության իրավունք: Բոլորն իրավունք ունեն լինել հավասար՝ անկախ նրանց ռասայից, սեռից, դավանանքից, ծագումից և տնտեսական կարգավիճակից:

Բազմերանգությունը ենթադրում է մարդկանց խմբերի մշակութային, լեզվական, կրոնական և էթնիկական տարբերությունների ճանաչում, ինչը հանդիսանում է հզոր հասարակության բնութագրիչ:

Ճշմարտություն - իշխանությունը չպետք է խաբի ժողովրդին և նրանից չպետք է թաքցնի տեղեկատվությունը: Ո՛չ իշխանությունը, ո՛չ էլ ժողովուրդը չունեն ստելու իրավունք:

Ժողովրդական համալսարանը ենթադրում է, որ իշխանության հզորության ակունքը ժողովուրդն է:

Հայրենասիրություն - ժողովուրդն իր երկրի և նրա արժեքների նկատմամբ սեր և հավատարմություն է արտահայտում ինչպես խոսքով, այնպես էլ գործով և հոգ է տանում երկրի բարեկեցության համար:

Օրինահպատակություն - ինչպես ժողովուրդը, այնպես էլ իշխանությունը պետք է օրենքին հպատակվի:

Ուժերի բաշխում - իշխանության գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերը պետք է ենթարկվեն ինստիտուցիոն բաժանման, և ոչ թե միայն մեկ ճյուղը լինի ամբողջ իշխանությունը կրողը:

Ներկայացուցչական կառավարություն - ժողովուրդն ունի կառավարությունում իր ներկայացուցչին ընտրելու իրավունք:

Վերահսկում և հաշվեկշիռ - իշխանության բոլոր երեք՝ գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերի ուժերը պետք է հաշվեկշռվեն, և ոչ մեկը չպետք է լինի դոմինանտ: Յուրաքանչյուր ճյուղ ունի մասցած երկուսի գործունեությունը վերահսկելու իրավունք:

Անհատական իրավունքներ - ամեն անհատ ունի կյանքի, ազատության, տնտեսական ինքնուրույնության և երջանկության հիմնարար իրավունք:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - VI ԱՍՏԻՃԱՆ. ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Նախագծի վրա աշխատելու վեցերորդ աստիճանը նախագծի վրա աշխատելու վերջին՝ եզրափակիչ փուլն է: Այս աստիճանում դուք պետք է կատարեք ձեր կողմից կազմված նախագծի շնորհանդես, որտեղ ներկայացված կլինի նախագծի զարգացման լրիվ դինամիկան. ինչու եք ընտրել տվյալ հիմնախնդիրը, ինչպես եք հայթայթել տեղեկություններ նրա մասին, ինչ հետազոտում եք անցկացրել, ինչպես եք սահմանել հիմնախնդրի վճռման ուղիները, ինչ ռեսուրսներ անհրաժեշտ եղան ձեզ նախագծի վրա աշխատելիս և ինչպես և ում կողմից պետք է վճռվի այս հիմնախնդիրը:

Պորտֆոլիոյի ներկայացման ժամանակ անպայման պետք է հիշեք, որ ձեր շնորհանդեսը ծառայում է հետևյալ նպատակներին.

- Լսարանին ցույց տալ ձեր կողմից ընտրված հիմնախնդրի կարևորությունը:
- Լսարանին ցույց տալ հիմնախնդրի վճռման այլընտրանքային ուղիներ, նրանց դրական և բացասական կողմերը:
- Դասարանի որոշումը ներկայացնել՝ որպես հիմնախնդրի վճռման լավագույն ուղի:
- Ներկայացնել, թե ինչպես կարող է ձեր կողմից ընտրված ռազմավարությունը նպաստել տարբեր մասնաճյուղերին, ինքնակառավարման, գործարար մասնաճյուղին, ոչ կառավարական կազմակերպություններին նախագծի իրականացման տեսանկյունից:



Ի՞ՆՉ ՓՈՐՁ ՁԵՌՔ ԲԵՐԵՑԻՔ

Նախագծի վրա աշխատանքի վերջին, եզրափակիչ փուլն ընդգրկում է այն բանի գիտակցումը, թե ինչ եք ստացել այս նախագծի վրա աշխատելու ընթացքում, ինչ փորձ եք ձեռք բերել և ինչ կարողություններ զարգացրել: Ձեր ստեղծած նախագծով արդեն կարող եք դիմել համապատասխան կազմակերպություններին՝ համագործակցելու նպատակով: Բացի այդ, աշակերտների նախագծերի ֆինանսավորման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն կարող եք տեսնել www.initiatives.ge. կայք էջում:

Ստորև տրված են հարցեր, որոնք ձեզ կօգնեն վերլուծել այն փորձը, որ ձեզ տվեց նախագծի վրա աշխատանքը.

1. Նախագծի վրա աշխատելիս՝ ի՞նչ սովորեցիք անձամբ դուք, և ինչ սովորեց դասարանը՝ որպես մեկ թիմ:
2. Այս նախագծի վրա աշխատանքը ձեր ո՞ր կարողությունների զարգացմանը նպաստեց:
3. Ի՞նչ դրական կողմ ունի մեկ թիմով աշխատելու սկզբունքը:

4. Ի՞նչ բացասական կողմ ունի մեկ թիմով աշխատելու սկզբունքը:
5. Այս նախագծում ի՞նչն էր ձեր ամենամեծ նվաճումը:
6. Ի՞նչն էր ձեր դասարանի՝ որպես մեկ թիմի ամենամեծ նվաճումն այս նախագծում:
7. Ինչպե՞ս կկարողանաք բարելավել հիմնախնդրի վճռման կարողությունները:
8. Ի՞նչ կփոխեիք, եթե նորից սկսեիք աշխատել այս հիմնախնդրի վրա:

Դուք արդեն ավարտել եք աշխատանքը նախագծի վրա: Ցանկանում ենք նրա հաջողությամբ իրականացում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ծանոթացեք համառոտ ուղեցույց նյութի, թե ինչպես պետք է գրեք նախագիծ: Նախագծային հայտը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից.

1. Տիտղոսաթերթ
2. Տեղեկություններ հայտատուի վերաբերյալ
3. Նախագծի համառոտ ամփոփում
4. Հիմնախնդրի նկարագիր
5. Նախագծի մանրամասն նկարագիր
6. Նախագծի իրականացման ժամանակացույցը
7. Նախագծի բենեֆիցիարները
8. Նախագծի բենեֆիցիարների քանակը
9. Նախագծի գնահատումը
10. Նախագծի բյուջեն
11. Ռիսկի գործոնների նկարագիր

1. **Տիտղոսաթերթի** վրա տեղադրեք նախագծի անվանումը, նախագծի իրականացման համար սահմանված ժամկետը և նախագծի հեղինակի կամ հեղինակների խմբի անունը:

2. **Հայտատուի վերաբերյալ տեղեկություններն** ընդգրկում են նախագծին մասնակից գլխավոր կողմերի, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց գործունեության մասին համառոտ տեղեկություններ: Այս տեղեկատվական բլոկը պետք է ընդգրկի կազմակերպության հիմնադրման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և նրա կողմից իրականացված այն ակտիվությունները, նախագծերը, որոնք անմիջական կապի մեջ են ներկայացված նախագծի կամ նախագծի որևէ բաղադրամասի հետ: Չմոռանաք մատնանշել յուրաքանչյուր կողմի և կազմակերպության ղեկավարի կոնտակտային տվյալները: Կոնտակտային տեղեկությունների մեջ նշվում են փոստային և էլեկտրոնային հասցեները, նաև հեռախոսահամարը և ֆաքսի համարը: Այսօրվա դրությամբ կազմակերպությունների մեծ մասն ունի իր սեփական կայք-էջը կամ բլոգը, որը նույնպես ցանկալի է, որ նշեք, քանի որ անհրաժեշտության դեպքում նախագծային հայտը քննարկողը մանրամասն տեղեկություններ հենց այս ռեսուրսներից կստանա: Հայտի այս մասում նկարագրեք, թե յուրաքանչյուր գործընկեր ինչ կոնկրետ գործունեություն և ակտիվություն կիրականացնի:

3. **Նախագծի համառոտ ամոփոփումը** հիմնականում նրանից հետո է գրվում, երբ նախագծային հայտն ավարտված է: Այս մասում դուք պետք է ամփոփեք և շատ համառոտ ձևակերպեք նախագծի նպատակը, նպատակի իրականացման հիմնական ուղիները և ակնկալվող արդյունքները: Նախագծի համառոտ ամփոփումն այնպես

պետք է ձևակերպեք, որ ընթերցողի մոտ ընդհանուր պատկերացում ստեղծվի նախագծով ակնկալվող արդյունքների մասին: Բացի այդ, աշխատեք համառոտ նկարագրել նախագծի շրջանակներում պլանավորված հիմական նվաճումները:

4. **Հիմնախնդիրների/անհրաժեշտությունների նկարագիր** - սա նախագծի հայտի գլխավոր մասերից մեկն է, որտեղ դուք փաստարկված պետք է հիմնավորեք, թե ինչու եք հայտում առաջադրված հարցը պրոբլեմային համարում: Այս մասի ձևակերպման ժամանակ աշխատեք որքան հնարավոր է շատ փաստարկ, վիճակագրական տվյալ, ձեր կամ ուրիշների դիտարկման արդյունքներ օգնության բերել: Պատասխանեք հարցերին. ինչո՞ւ է առաջացել այս հիմախնդիրը, ի՞նչ աղբյուրների վրա հիմվելով եք եզրակացնում պրոբլեմայնությունը: Հիշեք, թե որ հիմախնդրի առաջքաշումը պետք է հիմվի փաստերի, օբյեկտիվ տվյալների վրա: Այս մասի ձևակերպման ժամանակ խուսափեք այնպիսի դատողություններից, ինչպիսիք են՝ իմ կարծիքով, մեր դիտարկմամբ: Գերադասելի է վերևում բերված տվյալների, փաստերի կամ հետազոտությունների վրա հիմվելով հիմավորել հիմախնդիրը:

5. **Հիմախնդրի մանրամասն նկարագիր** - հայտում առաջադրված հիմնախնդրի կարգավորման համար պետք է տարբերակեք հիմնական ակտիվությունները և ենթաակտիվությունները: Ակներևության նպատակով գրի առեք այս ակտիվությունները և այնուհետև յուրաքանչյուրի կողքին գրեք ենթաակտիվությունները: Այս մասի նախապատրաստման համար դուք պետք է պատասխանեք հետևյալ հարցերին. «Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում», «Ե՞րբ, ժամանակի կամ նախագծի ո՞ր շրջանում և ի՞նչ հաճախականությամբ են իրականացվում», «Որտե՞ղ են իրականացվում, ո՞վ է իրականացնում», «Ո՞վ է նրանց իրականացման համար պատասխանատու անձը»: Որպեսզի ձեր և այլ ընթերցողների համար ակնառու դարձնեք նախագծի ակտիվությունները և նրա բաղադրիչ տեղեկությունները, կարող եք բառային նկարագրին կցել գրաֆիկական նկարներ կամ աղյուսակ, որը հաճախ անվանում ենք նաև նախագծի իրականացման գրաֆիկա: Նախագծի մանրամասն նկարագրի մասնատումը հիմական և ենթաակտիվությունների կօգնի ձեզ հետագայում հեշտ կազմել իրատեսական և լավ հաշվարկված բյուջե:

6. **Նախագծի իրականացման գրաֆիկը** աղյուսակի տեսքով ներկայացված գործողությունների մանրամասն, ժամանակի մեջ բաշխված պլան է՝ շաբաթների, ամիսների, եռամսյակների և հաճախ՝ տարիների համաձայն: Պլանը ցույց է տալիս, թե որ ակտիվությունը ժամանակի որ շրջանում է իրականացվում: Այս պլանում կարող եք նաև փոքրիկ եռանկյունիով նշել այն ժամանակահատվածը (ամիս, շաբաթ), երբ նախագծում պլանավորված հիմական ակտիվության

նշանակալի նվաճումը պատրաստ կլինի (այս նշումն անգլերեն կոչում են մայլ-ստոունս կամ միլը մատնանշող քար, ինչը նշանակում է, որ արդյունքը նվաճված է, ակտիվությունների գլխավոր մասն՝ անցած):

7. Անձինք, ովքեր **նախագծից օգուտ են ստանում (բենեֆիցիար)** - այս մասում նկարագրեք, թե ովքեր են այդ մարդիկ/մարդկանց խմբերը, ում օգուտ կբերի տվյալ նախագիծը: Աշխատեք, եթե ոչ ճշգրիտ, գոնե մոտավորապես նշել, թե քանի մարդ կօգտվի կամ քանի մարդու վրա կտարածվի նախագծի արդյունքը: Հետագայում, նախագծի հաջողության գնահատման ժամանակ դուք կօգտվեք այս ցուցումից և կնշեք, կարողացա՞վ արդյոք ձեր նախագիծը ենթադրաբար նշված քանակությամբ մարդկանց սպասարկել: Դրական արդյունքը կլինի ձեր նախագծի հաջողության ցուցանիշներից մեկը:

8. **Բենեֆիցիարների բաժանումը** - ցանկալի է բենեֆիցիարներին բաժանել ըստ կարգերի (օրինակ՝ 30 մանկավարժ, 35 ծնող, դպրոցի վարչության 10 ներկայացուցիչ, համայնքի 100 ներկայացուցիչ և այլն), որպեսզի նախագծի արդյունքների պատկերն ավելի հստակ լինի, իսկ հաջողությունը՝ լավ չափելի:

9. **Նախագծի գնահատումն** ընդգրկում է գնահատման չափանիշները, այսինքն՝ նախագծի այս մասում դուք ցույց եք տալիս, թե ինչով կչափեք և երբ կասեք, որ նախագիծը հաջողված է: Այստեղ դուք կարող եք կազմել հարցարան նախագծի մեջ ընդգրկված մասնակիցների համար: Հարցումը կարող եք անցկացնել նախագծի սկզբում և վերջում, կամ կարող եք հարցում անցկացնել պատահական ընտրությամբ և նախագծի արդյունքի և նրա նշանակության մասին հարցնել հասարակության, նախագծից օգտվող անձանց, տեղական համայնքի, ընտանիքի անդամների կարծիքը:

10. **Նախագծի բյուջեն,** ինչպես նշեցինք, բխում է նախագծի մանրամասն նկարագրից: Այստեղ նշեք նաև, թե ինչ քանակությամբ գումար եք պահանջում դոնոր կազմակերպությունից և ինչ քանակությամբ համամասնակցություն է իրականացնում դիմողը (մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների տեսքով, օրինակ՝ նախագծի իրականացնողների կողմից անհատույց աշխատանք նախագծի համար, նախագծին գիտաժողովների դահլիճի կամ տեխնիկայի տրամադրում և այլն): Հիշե՛ք, կարող է գրվել նախագիծ, որը ֆինանսավորում է պահանջում և, ընդհակառակը, որը չի պահանջում ֆինանսավորում: Կոնկրետ դեպքում ավելի իրատեսական կլինի, եթե նախագիծ գրեք, որի կատարման համար անհատույց կաշխատեք, առանց ֆինանսավորման: Այսպիսի նախագծի իրականացման հնարավորությունն անհամեմատ ավելի մեծ կլինի, քանի որ դժվար է ֆինանսավորում գտնելը, և դա նախագծի իրականացումը ռիսկի տակ կդնի: Իսկ ձեր գլխավոր նպատակը ոչ միայն նախագծի կազմումն է, այլև նրա իրականացումը:

11. **Ռիսկի գործոնների նկարագիրը** - մինչև նախագիծը սկսելը անհրաժեշտ է մտածել և գրել, թե ինչ հնարավոր դժվարությունների կարող եք հանդիպել նախագծի իրականացման ժամանակ: Գրի առեք այս ռիսկ-գործոնները և այնուհետև ամենից շատ ակնկալվող գործոնների հաղթահարման և նրանցից խուսափելու պլան կազմեք: Առանձնացրեք նաև կոնկրետ անձ/անձանց, որոնք նկարագրված ռիսկի դեպքում կիրականացնեն կոնկրետ ակտիվություններ: Գրեք իրականացվելիք անհետաձգելի ակտիվությունների ցանկը և կատարման հաջորդականությունը: Հիշեք, որ ռիսկերի կառավարման մասին ավելի լավ է հենց սկզբից հոգ տանեք, որպեսզի հետագայում նախագծի իրականացումը կանգ չառնի:

ԴԱՍԱԳՐՔԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Տվյալ երկրում մշտապես ապրող բնակչության ոչ դոմինանտ մաս, որը մեծամասնությունից տարբերվում է իր էթնիկական, կրոնական կամ լեզվական բնութագրիչներով և ցանկանում է պահպանել իր ինքնատիպությունը:
ԱՊԱԹԻԱ	Հետաքրքրություն չունենալ, բացարձակ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ:
ԱՊԱՐՏԵԻԴ	Ռասիստական բաժանման սկզբունք Հարավային Աֆրիկայում, ռասայական խտրականության ձև, որն իրականացնում է կառավարող խավը տեղի բնակչության նկատմամբ:
ԱՎՏՈԿՐԱՏԻԱ	Հուն.՝ ինքնակառավարում՝ պետական կառավարման ձև, որի ժամանակ ամբողջ իրավունքը միայն մեկ մարդու ձեռքին է:
ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ	Կարծիքների բազմերանգության գոյություն և դրանց ճանաչում:
ԲԱԶՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ	Գոյություն ունի այն ժամանակ, երբ ամբողջ հասարակությունը և համայնքը, յուրաքանչյուր փոքրամասնական խումբ արդարացիորեն մասնակցում են բոլոր այն որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են այս հասարակության համար նշանակալի հարցերին:
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	Կնոջ և տղամարդու հավասար իրավունքներ և հնարավորություններ, միատեսակ պատասխանատվություն և պարտավորություններ:
ԴԻԿՏԱՏՈՒՐԱ	Տիրող դասակարգի կամ իշխանություն ունեցող անձի անսահմանափակ պետական իշխանություն, բռնապետություն:
ԵՐԿԸՆՏՐԱՆՔ	1. Տրամ.՝ դատողություն կամ եզրակացություն, որը պարունակում է միմյանց փոխբացառող երկու դրույթ, որոնցից անպայման պետք է ընտրվի մեկը: 2. Այնպիսի իրավիճակ, երբ երկու անցանկալի հնարավորություններից անհրաժեշտ է ընտրել մեկը:
ԷԹՆՈՑԵՆՏՐԻԶՄ	Տեսակետ, ըստ որի մի էթնիկական խումբը գերազանցում է մյուսին:
ԷԼԵԿՏՈՐԱՏ	Մարդիկ, որոնք կարող են մասնակցել տարբեր մակարդակի ընտրությունների և աջակցել որևէ խմբի:
ԷՄԻԳՐԱՆՏ	Անձ, որը մշտական բնակության է ուղևորվում այլ երկիր:
ԸՆԴԴԻՄԱԽՈՍ	Վեճի ժամանակ հակառակ կարծիք ունեցող մարդ:
ԽԱՐԱՆ	Հին Հունաստանում ստրուկի կամ հանցագործի մարմնի վրա արվող դրոշմ: Մարդու առանձնացում՝ բացասական խարանով:
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Առանձին անձանց կամ խմբերի իրավունքների սահմանափակում կամ նրանց նկատմամբ բացասական վերաբերմունք՝ առանց հիմնավորման:

ԿԱՐԾՐԱՏԻՊ

Մարդկանց կամ գաղափարների անչափ պարզեցված, ընդհանրացված և հաճախ չգիտակցված ընկալում, որը, հնարավոր է, առաջացնի նախօրոք ստեղծված բացասական կարծիք և խտրականություն: «Կարծրատիպ» տերմինը կապվում է տպագրական սարքավորման անվանման հետ: Կարծրատիպը մետաղյա ամբողջական տպագրական ձև է, որը ստեղծելուց հետո դժվար է փոխվում: Փոխաբերական իմաստով կարծրատիպը անփոփոխ կրկնված, շաբլոնային է նշանակում:

ԿՈՄՈՒՆԻԶՄ

Հասարակական-քաղաքական գաղափարախոսություն, որի համաձայն ինչպես իշխանությունը, այնպես էլ սեփականությունը պետք է լինեն հասարակության ձեռքում: Հասարակական բարեկեցությունը համընդհանուր մատչելի պետք է լինի: Մարքսիստական տեսության համաձայն, կոմունիզմը հասարակական զարգացման վերջնական կետն է, անդասակարգ հասարակություն: Հասարակության յուրաքանչյուր անդամ աշխատում է աշխատելու կարողության և հնարավորությունների շրջանակներում, սակայն ստանում է ըստ պահանջմունքների:

ԿՈՆՍԵՆՍՈՒՍ

Բոլոր կարծիքների նկատառմամբ խմբին ընդհանուր համաձայնության հանգեցնելը:

ՀԱՄԱՅՆՔ

Երկու կամ մի քանի բնակավայրի կամ գյուղի բնակիչների միավորում:

ՀՌՉԱԿԱԳԻՐ

Փաստաթուղթ, որում ձևակերպված են համաձայնեցված սկզբունքներ և չափորոշիչներ: Հռչակագիրը չի կրում իրավական պարտավորեցնող բնույթ: Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) հաճախ հրապարակում է մեծ ազդեցություն ունեցող հռչակագրեր, որոնք չունեն պարտավորեցնող բնույթ:

ՀՐԱՏԱՊ

Մեծապես նշանակալի, կենսականորեն կարևոր:

ՄԱԿ

Միավորված ազգերի կազմակերպություն: Համընդհանուր խաղաղության ապահովման և պետությունների համագործակցության միջազգային կազմակերպություն: Ստեղծվել է 1945 թվականի հունիսի 26-ին, երբ Սան-Ֆրանցիսկոյի գիտաժողովին 50 պետություն ստորագրեց նրա կանոնադրությունը: Այս օրն ամեն տարի նշվում է աշխարհում՝ որպես Միավորված ազգերի կազմակերպության օր: Ներկայումս ՄԱԿ-ի անդամ է 192 պետություն:

ՄԱԿ-ի գլխավոր նպատակներն են.

- Պահպանել միջազգային խաղաղությունը:
- Զարգացնել պետությունների բարեկամական հարաբերությունները՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքների վրա:
- Իրականացնել միջազգային համագործակցություն՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական հիմնախնդիրների վճռման համար:
- Նպաստել մարդու հիմնարար իրավունքների համընդհանուր հարգանքին բոլորի համար՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից և կրոնից:

ՄԱՐԳԻՆԱԼ

Սոցիալական խմբից դուրս գտնվող, արտաքսված:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին: Հռչակագիրը վերաբերում է ինչպես քաղաքացիական և քաղաքական, այնպես էլ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին: Մասնավորապես, հռչակագրով նախատեսված են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը, անձնական անձեռնմխելիության իրավունքը և այլն: Համընդհանուր հռչակագիրը իրավաբանորեն պարտադիր չէ, այն երաշխավորական բնույթի փաստաթուղթ է:

ՆԻՀԻԼԻԶՄ

Ժխտարարություն, անտարբերություն ամեն ինչի նկատմամբ:

ՊՈՐՏՖՈԼԻՈ

Աշխատությունների հավաքածու, յուրօրինակ թղթապանակ: Պորտֆոլիոն կարող է ընդգրկել աշակերտի կատարած տնային և դասարանական առաջադրանքները, խմբային նախագծերի հաշվետվությունները և այլն: Պորտֆոլիոյի նշանակությունն այն է, որ աշակերտը հավաքի նյութ, ինքը գնահատի իր աշխատանքը և գիտակցի, թե ինչ գիտելիք է ձեռք բերել և նրա որ հմտություններն ու կարողություններն են զարգացել՝ ընտրված թեմայի վրա աշխատելիս: Պորտֆոլիոն հնարավորություն է տալիս, որ աշակերտը հայտնաբերի, թե ինչ սխալներ է թույլ տվել և ապագայում ինչպես կարելի է նման սխալներից խուսափել:

ՌԱՍՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդուն ըստ ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգային կամ էթնիկական պատկանելության ցանկացած սահմանափակման, տարբերության, բացառության կամ առավելության շնորհման գործընթաց: Ռասայական խտրականության ժամանակ տեղի է ունենում քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ ոլորտում մարդու անհատական իրավունքների և հիմնարար ազատությունների, հավասարության սկզբունքների ճանաչման և նրա իրականացման հնարավորությունների հերքում, նվաստացում:

ՌԱՍԻԶՄ

Տեսակետ, ըստ որի մարդկանց մի ռասան մյուսներից լավն է:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՁ

Մարդ, որի մոտ հիվանդության, վնասվածքի, մտավոր կամ ֆիզիկական արատի հետևանքով, առողջության այս կամ այն չափով խախտման պատճառով խախտված են օրգանիզմի կենսական ֆունկցիաները, ինչը պայմանավորում է մասնագիտական աշխատանքի կարողության լրիվ կամ մասնակի կորուստ կամ կենցաղի և կյանքի էական դժվարացում, ինչը նրան տանում է գործունակության ժամանակավոր կամ մշտական սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (*Վրաստանի օրենք Բժշկական, սոցիալական փորձաքննության մասին, ընդհանուր դրույթ, հոդված 3*):

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հատուկ կանոնավոր գործողություններ (սպանություն, ֆիզիկական և հոգևոր վնասի պատճառում, ծնելիության սահմանափակում, երեխաների բռնի հեռացում հայրենի վայրերից), ինչը նպատակադրում է կոնկրետ էթնիկական, քաղաքական կամ մշակութային խմբի ոչնչացում կամ նրա լեզվի, դավանանքի և մշակույթի ոչնչացում:

ՓՈԽԶԻՋՈՒՄ

1. Փոխզիջման ճանապարհով նվաճված համաձայնություն: 2. Բոլոր տեսակետների նախատեսմամբ՝ խումբը տանել ընդհանուր համաձայնության:

ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հուն.՝ Polis՝ ինքնուրույն, ինքնավար միավորում: Հին Հունաստանում քաղաք-պետությունները մշակութային առանձին կառավարման միավորներ էին: Նրանք ընդհանուր լեզու, կրոնական պատկերացումներ և աշխարհայացք ունեին, թեպետ օրենսդրությունը և քաղաքի կառավարումը ներկայացված էին ըստ ինքնավար պետության սկզբունքի: Քաղաք-պետությունը հույները պոլիս էին անվանում, հենց այստեղից է առաջացել պոլիտիկա՝ քաղաքականություն տերմինը: Այն միայն մեկ քաղաքից էր բաղկացած, ինչպես ժամանակակից Մոնակոյի և Լյուքսեմբուրգի դեպքում է: Հին հունական քաղաք-պետությունները շատ էին տարբերվում միմյանցից կառավարման ձևով, սոցիալական հիերարխիայով, օրենսդրության կառուցվածքով և որոշումների կայացման ընթացակարգերով: Օրինակ՝ Աթենքում ժողովրդավարական կառավարում էր, իսկ Սպարտայում թագավորում էր երկու թագավոր:

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Լատ.՝ propaganda՝ բառացիորեն նշանակում է՝ ենթակա է տարածման, քարոզչությամբ մարդկանց հայացքների, կարծիքների, ընդհանուր գիտակցության վրա տարբեր խորհրդանշանների միջոցով (բառերով, նշանաբաններով, երաժշտությամբ, լրատվամիջոցներով և այլն) իրականացվում է գաղափարական ներգործում: Նպատակին հասնելու համար քարոզիչը (անձը, որը քարոզչություն է ծավալում), շրջանցում է կամ խեղաթյուրում նշանակալի փաստերը և աշխատում լսարանին մատուցել միայն իր համար ընդունելի տեղեկություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Օգտագործված գրականությանը ծանոթանալը կօգնի ձեզ ավելի խորը ուսումնասիրել դասագրքում քննարկված թեմաները)

1. Մարդու իրավունքների բառարան, Թբիլիսի, 2005 թ.

2. «Ճանապարհ դեպի իրավունքները», 2002թ., հեղինակների խումբ (Նորվեգիայի փախստականների խորհրդի աջակցությամբ)

3. Կոմպաս՝ Դասագիրք մարդու իրավունքների կրթության բնագավառից՝ երիտասարդների մասնակցությամբ, հեղ.՝ Պատրիցիա Բրանդեր, Ռուի Գոմես, Էլլի Կին և այլն, վրաց.հրատարակ., խմբագիր՝ Գիորգի Կենճոշվիլի, Թբիլիսի, 2004 թ.

4. «Կոմպասիտո», Դասագիրք մարդու իրավունքների կրթության բնագավառից երեխաների համար, հեղինակներ՝ Նենսի Ֆլաուերս, Ջո Կլեյս, Ռանիա Ֆազահ, Անետ Շնայդեր, Ժուժանա Սելեն, 2009 թ.

5. Բազմերանգության կառավարման հիմունքները, «Գործընկերներ Վրաստան», 2010 թ.

6. «Առաջին քայլեր», Նախնական դասագիրք մարդու իրավունքների կրթության համար, Amnesty International, 1996 թ.

7. Քաղաքացիական կրթություն, Ուսուցչի գրադարան, հ. I,I I., Բառարան, Տեղեկատու: Թբիլիսի, 2010 թ., Քննությունների ազգային կենտրոն

8. We the People… Project Citizen – Center for Civic Education, 2001 թ.

9. էջ 11 © Freedom House

10. էջ 12. © Mikle15/Dreamstine.com

11. էջ 13 © Ռոզա Ինանիշվիլի

12. էջ 14 «Փոքրիկ տղան Գողգոթայում»-Ռնազ Ինանիշվիլի © Ռոզա Ինանիշվիլի

13. էջ 25 © Julia Freeman-Woolpert

14. էջ 26 © Renjith Krishnan

15. էջ 36 © Դավիթ Նադարիա

16. էջ 45 © Maggie Smith

17. էջ 47 © Master Isolated Images

18. էջ 49 © www.vectoropenstock.com

19. էջ 57 © Գոգա Չանադիրի

20. էջ 62 © Florida Center for Institutional Technology, 2009

21. էջ 65 © Վրաստանի կինո և ֆոտո արխիվ

22. էջ 67 © Գոգա Չանադիրի

23. էջ 70 © Վրաստանի կինո և ֆոտո արխիվ

24. էջ 76 © Գոգա Չանադիրի

25. էջ 78 © Վրաստանի Կարիտաս © Human Rights Watch; © Federation internationale desligues des droits de l'Homme

26. էջ 79 © Bailly Elodie

27. էջ 81 © Գոգա Չանադիրի